

**ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ
ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ
ԶԱՆՔԵԶՈՒՐՈՒՄ
(1905—1906 թթ.)**

1995—96 թթ. լրանում է 90 տարին այն իրադարձությունների, որ տեղի ունեցան Կովկասում 1905 թ. փետրվարից մինչև 1906 թ. սեպտեմբերը և հայտնի են որպես հայ-թուրքական ընդհարումներ: Այդ իրադարձությունները, որ հիմնականում ծնունդն էին այսպես կոչված Ռուսական 1-ին հեղափոխության արձագանքների և երկրում տեղի ունեցող քաղաքական պայքարի ու երկպառակությունների, հսկայական վնաս հասցրեցին հատկապես Այսրկովկասի հայկական բնակավայրերին: Տեղահան եղան բազմաթիվ գյուղեր, հայ բնտանիքներ, գոհվեցին հազարավոր հայեր:

Անշուշտ, մի շարք տեղերում հայերը կազմակերպեցին ինքնապաշտպանության ջոկատներ և հուժկու հարվածներ հասցրեցին թշնամուն, եղան նաև սայթաքումներ, թույլ տրվեցին սխալներ, սակայն արդյունքում հայերը շատ գավառներում ժողովրդագրական հավասարակշռությունը թեքեցին դեպի իրենց: Դա հատկապես նկատելի էր Զանգեզուրում, որտեղ թուրքական տարրը մշտապես ձգտում էր գերակշռության, սակայն մշտապես էլ հայերի վճռականությանը, գործարարությանը և զարգացման առաջընթացին բախվելով ընկրկում էր:

Թուրք մոլախոտի հասկահանությունը Զանգեզուրում մեծ չափով նվազեց 1918—20 թվականներից հետո, երբ Անգրանիկ զորավարի և Գարեգին Նժդեհի ջանքերի շնորհիվ գավառում էթնիկական էական բարեփոխումներ կատարվեցին: Եվ ինչպես կարելի էր հարմարվել այն փաստի հետ, երբ թուրքերը գերակշռության հասնելու համար, ամեն պատահած տեղում գյուղեր էին հիմնում: 1986 թ. աշխարհացույցով, օրինակ, Զանգեզուրի թուրքական գյուղերի բնակչության միջին խտությունը կազմել է 271 մարդ, հայերի 675 մարդու դիմաց: Ու թեև 1920-ին կարծես թե Հայաստանում այդ հարցը լուծված էր, սակայն հետագա 70 տա-

րիներին մի շարք շրջաններում վիճակը նորից տազնապալից էր դարձել: Եվ միայն Ղարաբաղյան շարժումը և անկախ Հայաստանի հռչակումը վերջնականապես վճռեց այդ, ըստ էության անլուծելի խնդիրը:

Այնուամենայնիվ մեր հիշողության մեջ վերականգնելով 1905—1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների համայնապատկերը, այսօր ոչ միայն այդ խորքապատասառի վրա տեսնում ենք պատմությունից դաս շքաղելու հետագա տարիներին թույլ տված սխալները, ինչպես Շուշիի և Նախիջևանի հայաթափումը, այլ նաև սումգայիթյան, Բաքվի, Գանձակի ողբերգության, Շահումյանի շրջանի, Գետաշենի ու Չարդախլուի դեպքերի արմատները:

Ահա թե ինչու ոչ միայն ճանաչողական, այլ նաև պատմության դասերը սերտելու իմաստով որոշեցինք տպագրության հանձնել «Հայ-թուրքական ընդհարումները Ջանդեղուրում 1905—06 թթ.» գրքույկը, որ քաղված է հայ պատմաբան, տնտեսագետ-հետազոտող Ա.-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) 1907 թ. հրատարակած գրքից:

Ա.-Դոն (1867—1954) ծնվել է Նոր Բայազետում, սովորել է Խարկովի և Պետերբուրգի համալսարաններում: 1903 թ. հեղացել է դաշնակցական կուսակցությունից, որի անդամն էր 1895-ից: 1907 թ. շրջել է ամբողջ Այսրկովկասում, նյութեր հավաքել և գրել «Հայ-թուրքական ընդհարումները» գիրքը: Նա հեղինակել է նաև մի շարք աշխատություններ՝ հայ և այլ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների մասին:

ՇՉՈՐՍ ԳԱՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների բեկնաձու

Զանգեզուրն իր ընդարձակությամբ և ազգաբնակչության թվով Գանձակի նահանգի ութ գավառների մեջ բունում է երրորդ տեղը, իսկ հայ ազգաբնակչության թվով՝ երկրորդ տեղը: Գավառի ազգաբնակչության թիվն է 138 հազար:

Զանգեզուրի գավառը կազմված է երեք գավառներից, այն է՝ Բուն Զանգեզուրից, Սիսիանից և Ղափանից, ուր հայերն ապրում են ոչ համախմբված, այլ ցրված այս և այն տեղ փոքրիկ գյուղախմբերով, խառը թուրք ժողովրդի հետ: Այդ երեք գավառների ընդհարումներին մենք կտանք զատ-զատ գլուխներ:

Զանգեզուրի գավառի գյուղերից 82-ը հայաբնակ են, որոնցից 25-ը գտնվում են Բուն-զանգեզուրում, 20-ը՝ Սիսիանում, իսկ 47-ը՝ Ղափանում:

Դրանք են.

Բուն-Զանգեզուրում (տուն-շունչ)

1. Գորիս (4 մասերից բաղկացած)	— 450 (840)—4722
2. Քարահունջ	— 98—1352
3. Ալղուլիշեն (Արեգունի)	— 105—981
4. Խնձորեսկ	— 615—5368
5. Գյորու	— 60—603
6. Մաղանջուղ	— 23—391
7. Մինքենդ (145 տուն թուրք)	— 85—556
8. Խոզնավար (40 տուն թուրք)	— 80—659

*) Շարադրանքից հանվել են Զանգեզուրի աշխարհագրությանը և բնությանը վերաբերող հանրահայտ որոշ նկարագրություններ: Կատարվել են ծանոթագրական որոշ և ուղղագրական ու ձևաբանական աննշան շտկումներ, որոնք տեքստում նշվում են խմբագրի կողմից:

9. Զեյլա (100 տուն թուրք)	25	2183
10. Խնածախ (50 տուն թուրք)	— 188	
11. Քարաշեն	— 57—852	
12. Արավուս	— 16—181	
13. Տեղ	— 422 (700)—3532	
14. Կորնիձոր	— 225—1700	
15. Ղարաղշլաղ	— 430 (600)	
16. Ալիղուլի	— 100	
17. Հարար	— 103 (135)	
18. Տաթև	— 177—2490	
19. Սվարանց	— 21—377	
20. Տանձատափ	— 31—424	
21. Յայջի	— 39—652	
22. Հալիձոր	— 64—732	
23. Երիցաթումբ	— 24—351	
24. Շինուհայր	— 174—1812	
25. Խոտ	— 122—1071	

Սիսիանում

1. Ղալաշուղ	— 42 (60)—351
2. Անգեղակոթ	— 171 (300)—2353
3. Շաղաթ	— 123 (180)—1441
4. Մազրա	— 72 (120)—1131
5. Բալաք	— 38 (60)—559
6. Ղարաքիլիսա	— 92 (150)—723
7. Ալիլու	— 76 (120)—919
8. Բոնակոթ	— 156 (350)—2880
9. Ախլաթյան	— 106 (190)—1302
10. Բնունիս	— 34 (55)—550
11. Թաղագյուղ	— 68 (100)—558
12. Աղքենդ	— 42 (70)—436
13. Տուորս	— 80 (120)—787
14. Ուզ	— 124 (180)—1302
15. Շենաթաղ	— 62 (95)—776
16. Լոր	— 34 (70)—508
17. Գետաթաղ	— 31 (55)—393

18. Դարբաս (110 տուն թուրք)	— 36	563
19. Շամբ	— 35	
20. Լծեն	— 25 (43)—	334

Ղափանում

1. Զեյվա	— 80—	882
2. Մողես	— 35—	135
3. Ուժանիս	— 47—	505
4. Խըդըրանց	— 39—	431
5. Եղվարդ	— 87—	812
6. Ագարակ	— 93—	1386
7. Տանձաթափա	— 29—	218
8. Տորթնի	—	138
9. Խոտանան վերին	— 37	681
10. Խոտանան ներքին	— 9	
11. Շրվենանց	— 32—	307
12. Խլաթաղ	— 30—	488
13. Առաջաձոր	— 60—	688
14. Նորաշենիկ	— 73—	569
15. Կավարտ	— 59—	654
16. Ըրկենանց	— 37—	374
17. Սեաքար	— 98—	845
18. Զափնի	— 47—	473
19. Արծվանիկ	— 132—	1201
20. Բարաբաթում	— 44—	445
21. Բեխ	— 32—	330
22. Վաշագան	— 46—	587
23. Բաղաբուրջ	— 41—	500
24. Գյուտղում	— 52—	793
25. Ճակատեն	— 41—	533
26. Քաջարանց	— 50 (100)—	675
27. Հանդ	— 30 (64)—	677
28. Քրդիկենց	— 40 (65)—	667
29. Մազրա	— 20 (17)	—
30. Փուխրուտ	— 29 (22)—	314
31. Շիշկերտ	— 35—	501

32. Կեմանց	17	—
33. Սալ	—	—
34. Հանդ (Փոքր)	—	31—191
35. Շիկահող	—	118—896
36. Սրաշեն	—	26—260
37. Կալեր	—	42—445
38. Վանք	—	43—443
39. Տաշտոն	—	34—357
40. Լիճք	—	49—550
41. Վահրավար	—	27—274
42. Գուտեմնիս	—	55—448
43. Կուրիս	—	23—246
44. Ագարակ	—	21—164
45. Մեղրի	—	209—1304
46. Մալև	—	44—375
47. Շվանիձոր	—	133—1112

(ՍԱՆՈՒՅՈՒՅՈՒՆ.— Աղյուսակի աջակողմյան թվերից առաջինը գյուղերի տների քանակն է՝ ըստ պաշտոնական տեղեկությունների, փակագծերի մեջ նշված թվերը՝ տների քանակն է՝ ըստ հեղինակի (Ա-ԴՈ) հավաքած տեղեկությունների, իսկ վերջին թվերը՝ գյուղերի բնակչության քանակությունն է՝ ըստ Տաթևի վանքի առաջնորդարանի տեղեկագրերի: Գյուղերի անվանումները տրված են այն ժամանակվա ավյալներով— խմբ.):

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԲՈՒՆ-ՉԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Գանձակի նահանգի ութ դավառներից ոչ մեկում կոտորածներն ու ավերումներն այնքան մեծ չափեր չընդունեցին և այնպես տևական չդարձան, ինչպես Զանգեզուրում: Եվ իսկապես, գուցե ոչ մի տեղ այնքան արյուն և արցունք չհոսեց, որքան այս հեռավոր լեռներում:

Մի ամբողջ տարի, փոքրիկ ընդմիջումներով, մեկ այս և մեկ այնտեղ բռնկվում էին ընդհարումները, ընկնում էին հարյուրավոր զոհեր, դատարկվում և ավերվում էին գյուղեր ու գյուղախմբեր՝ փոխադարձաբար երկու կողմերից, բայց և այնպես արյան և ավերի ծրագիրը իրագործված չէր համարվում:

Եվ այդ ընդհարումները այնքան շատ են, այնքան բազմատեսակ և միաժամանակ բազմաթիվ տեղերում կատարված, որ մարդ չգիտի որտեղից սկսի և որտեղ վերջացնի:

Բայց ինչպես էլ որ լինի, պետք է արձանագրել, որքան հնարավոր է փաստերի լեզվով, քսաներորդ դարի այս ոճրագործությունը՝ իր մի քանի մանրամասնություններով:

Սկսենք նախ Բուն-Չանգեզուրից:

Ի նկատի ունենալով Բուն-Չանգեզուրում հայկական գյուղերի աշխարհագրական դիրքերը և տեղի ունեցած ընդհարումները, նրանց կարելի է բաժանել հետևյալ վեց շրջանների.

1. Գորիս
2. Մինքենդ
3. Խոզնավար, Խնածախ, Զեյվա, Ալիղուլի և Հարար
4. Զեջիմլուներ
5. Ղարաղշլաղ
6. Տաթևի շրջան:

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԻՍՈՒՄ

(օգոստոս 1905 թ.)

Գորիսը Չանգեզուրի գավառի կենտրոնատեղին է՝ զուտ հայաբնակ մի վայր: Նա ընկած է մի հրաշալի հովտի մեջ, բաղկացած շորս մասերից, այն է՝ քաղաքից, որը կառուցված է գետի աջ ափին, մի սիրուն հարթության վրա, առայժմ 200 տնից բաղկացած, ուր գտնվում են կառավարչական հիմնարկությունները և բավական բանուկ շուկան. Գորիս գյուղից, որն ընկած է գետի ձախ ափին՝ քաղաքին կից կաստի-խութի ժայռերի և կոնուսների տակ*)՝ 500 տնից բաղկացած. Հին Գորիսից, որը գտնվում է քաղաքից դեպի հյուսիս՝ հովտի վերին մասում, 2 վերստ հեռավորության վրա՝ 90 տուն բնակիչներով, միևնույն ժամանակ կոշվելով վերին Շեն, և մի փոքրիկ գյուղից՝ 50 տուն բնակիչներով, մոտիկ Հին Գորիսին, որը կոշվում է Բուռուն:

Գորիսից դեպի հարավարևելք, մի քանի վերստ միմյանցից հեռու շրջանաձև ընկած են հինգ մեծ հայաբնակ գյուղեր, այն է՝ Ալիղուլին, Քարահունջը, Մաղանջուղը, Գյորուն, Խնձորեսկը:

*) Գարերի ընթացքում անձրևները և հողմը քերելով կաստի-խութի կուրծքը, կարծր շերտերից կերտել են ճիշտ և ճիշտ կոնուսաձև բազմաթիվ ժայռեր, որոնք Գորիսին տալիս են մի առանձին գեղեցկություն:

Գորիսի և Խնձորեսկի վրայով ձգվում է քոչվորների երթևեկության ճանապարհը, որը և եղավ Զանգեզուրի ընդհարումների պատճառ:

Գորիսի շրջանում հուզումներ նկատվեցին դեռևս օգոստոսի սկզբներին, երբ Խաչենի ձորակում, Աղդամի ճանապարհին տեղի ունեցող ընդհարումների լուրերի տարածման հետ միաժամանակ սարերից սկսվեց քոչվորների շարժումը դեպի դաշտ: Այդ շարժումը մի հոգեմաշ ծանրությամբ ճնշում էր առանձնապես այն հայաբնակ գյուղերին, որոնց սահմաններով անցնելու էին այդ թափառական ցեղերը:

Սակայն վտանգը միայն քոչվորների կողմից չէր: Ոչ պակաս հուզումներ էին նկատելի նաև տեղացի թուրքերի մեջ, որոնք սկզբում արտահայտվում էին միայն մասնակի դեպքերով: Անհատական սպանությունները և կողոպուտները մեծ չափեր ընդունեցին, ճանապարհները դարձան հայերի համար վտանգավոր, մինչև որ մի դեպք բուրրովին հուզեց մտքերը:

Օգոստոսի 16-ին Գորիսից տուն վերադարձող շորս անվանի հայեր՝ դարաքիլիսեցի (սիսիանցի — խմբ.) Զիլֆիդար-բեկ և նրա որդի Իսկանդար-բեկ Սաֆրազբեկյանները և բռնակոթցի Արշակ-բեկ և Զաֆար-բեկ Մելիք-Թանգյանները, հետներն ունենալով երկու ուղեկցող ստրաժնիկներ, Աղուզի և Վաղուզի գյուղերի սահմաններում, Ուշթափալարի (Եռաբլրի — խմբ.) մոտ Գյոբակ-դաշ (Պորտաքար — խմբ.) կոչված տեղում, ենթարկվեցին թուրքերի հարձակմանը և բարբարոսաբար սպանվեցին: Ստրաժնիկները փախան-ազատվեցին:

Այս արտակարգ սպանությունը մեծ հուզումներ առաջ բերեց ինչպես Սիսիանում, այնպես էլ Գորիսում և նրա շրջականներում:

Հուզումների այս փոթորկոտ միջոցին, օգոստոսի 17-ին, Գորիսի արևելյան բլուրների լանջերն իջան Քյարիմբեկլուի, Քյուրդ-Մահմուդլուի քոչվորները: Այդ նույն ժամանակ լուր հասավ, որ հիշյալ քոչվորներն իրենց հետ տանում են թուրք կնոջ զգեստ հագցրած Նախիջևանի գավառի հինգ հայ գերի կանանց:

Հայերը քոչվորներին խուզարկեցին, բայց ոչինչ չգտան: Նրանց մի մասը ծռել էր ճանապարհը և ուրիշ կողմով անցել-գնացել: Այդ հանգամանքը բացատրվեց գերի հայ կանանց փախցնելու միտումով:

Քոչվորները, որոնք խուզարկութեան միջոցին ոչ մի դիմադրութիւն, ոչ մի դժգոհութիւն ցույց չտվին, ճանապարհ ընկնելով՝ Խնձորեսկ գյուղի դաշտից քշեցին գյուղի նախիրը: Հայերը դուրս եկան ետ խլելու: Պրիստավ Վոսկրեսենսկին այդ բանը սուտ համարելով, հայերի վրա կրակ բացել տվեց, որից սպանվեց 25 տարեկան մի երիտասարդ՝ Խաչատուր Աբելյան անունով: Հայերը ետ քաշվեցին: Քոչվորները խրախուսված այդ բանից, շարունակելով իրենց ճանապարհը, բռնեցին և բարբարոսաբար սպանեցին դաշտերում աշխատող 11 գյուղացիների և անցորդ 4 բռններ տանող հայերի, բոլորը՝ 15 հոգի, և շտապով անցան-գնացին:

Գորիսի շրջանում հուզումները ավելի մեծացան մանավանդ, երբ տեղ հասավ Շուշիում բռնկված ընդհարման լուրը: Քոչվորները շարժվեցին սարերից մեծ խմբերով, տեղացի թուրքերը բոլորովին երես առան: Մինքենդի կողմերից հուսահատական լուրեր հասան:

Հայերը դրութեան լրջութիւնը կռահելով, դուրս բերեցին ինքնապաշտպանութեան խմբեր, նույնն արեց նաև Գորիսը՝ ոստիկանութեան այդ կենտրոնավայրը: Ի՞նչ արած, երբ կառավարութիւն, ըստ էութեան, գոյութիւն չունեն և հրապարակը թողնված էր ուժերի շափմանը:

Եվ ահա օգոստոսի 18-ին տեղի ունեցավ մի նոր անցք: Այդ օրը Համզալու գյուղացի Նիֆթալիբեկը՝ Մինքենդի գրագիր, ճիւղաղ Շամիրի հայրը, 15 զինված թուրքերով գալիս էր Գորիս: Դեռ քաղաք չմտած, դիրքերում կանգնած զինված տղաները, կասկածելով սրանց վրա, արդելում են քաղաք մտնել: Թուրքերը շցանկացան ետ դառնալ, որից և առաջ եկավ ընդհարում և հրացանաձգութիւն, որը դադարեցնելու համար վարչակազմը միջոցներ չձեռնարկեց: Այդտեղ սպանվեցին Նիֆթալիբեկը և նրա մարդկանցից երկուսը, իսկ հայերից երկու երիտասարդներ՝ Փաշան և Բախշին:

Այս դեպքն արդեն բոլորովին հուզեց մտքերը: Թուրք բեկերը, որոնք դեռևս մարտ ամսին ծրագրել էին հարձակվելու հանքերի Ուղուրչայ բազարի վրա և կողոպտելու, այս անգամ բացարձակ հրապարակ եկան: Նրանցից ամենամեծ հանդգնութիւն ունեցողը Իլդրիմբեկ Սուլթանովն էր, որն ահագին հրոսակախումբ կազմած, օգոստոսի 20—21-ին գորիսեցիներին ուլտիմա-

տումի ձևով մի արտասովոր պահանջադիր ուղարկեց, որով պահանջում էր.

1. Գորիսից դուրս թողնել թուրք բնակիչներին:
2. Ազատ ճանապարհ տալ քոչվորներին:
3. Հեռացնել Գորիսի դիրքերից հայ զինված տղաներին:
4. Վճարել 10 հազար ուրբլի:

Եվ այսպիսի մի անպատկառ առաջարկութունն Ռուսաստանում, ուստի պրիստավ Յավորսկու միջոցով անում էր մի քաղաքի մի հրոսակապետ և այդպիսի բանակցությանն էլ միջամտում էր ինքը՝ դավառապետ Մվալիանին՝ կատարելով նաև այդ հրոսակապետի մեկ այլ քմահաճույքը՝ բանտից ազատելով մի քանի թուրք բանտարկյալներին՝ մինչև նրանց պատժի ժամանակամիջոցի լրանալը:

Գորիսում եղած թուրքերը, իհարկե, բաց թողնվեցին, քոչի ճանապարհի առաջն էլ բաց էր, սակայն ինչ վերաբերում է հայ զինված տղաներին դիրքերից վայր բերելուն և 10 հազար ուրբլի տուգանք տալուն, իհարկե, չկատարվեցին: Այլ կերպ լինել չէր էլ կարող, որովհետև հենց այդ դիրքերի շնորհիվ Գորիսն ազատ մնաց Իլդրիմ-բեկի հարձակումից, թեև թուրք խուժանը գնաց իր դադանացած հակումներին դոհացում տալու անպաշտպան Մինքենդում և նրա բախտակից մի քանի զյուղերում, ինչպես այդ կտեսնեք մի փոքր հետո:

Գորիսի վրա մենք երկար կանգ չենք առնի, որովհետև այդտեղ խոշոր զանգվածային ընդհարումներ տեղի չունեցան, իսկ մասնակի դեպքերը (ինչպես էին սեպտեմբերի 12-ին Այնախու կոչված տեղում խնձորեսկյիներ Ա. Մուսայելյանցի և Շափաղաթ Բադեջանցի սպանութունը և հոկտեմբերի 17-ին Հին Գորիսի 2 հայ հովիվների մորթելը և 400 ոչխար քշելը) այնքան շատ են, որ հկարագրել անհնարին է:

Մենք միայն կարճանագրենք այն աղետը, որին ենթարկվեց Քարահունջը:

1906 թ. սեպտեմբեր ամսին կողակների կողմից նշանակված էկզեկուցիայի (մարմնական պատիժներ) հետևանքով Քարահունջը վճարեց 1500 ուրբլի տուգանք, դրանից երկու անգամ ավելի մեծ գումար էլ ծախսեց 150 կողակի 12 օր շարունակ կերակրելու և հազար ու մի պահանջներ կատարելու վրա: Բացի այդ, ժողո-

վորդը կողակների դալուց գյուղից փախավ պանդուխտ դարձավ և
այնքան ժամանակ շվերադարձավ, մինչև որ կողակները գյուղում
տարածված տիֆի պատճառով շհեռացան:

Այս աղետի պատճառը հետևյալն էր:

Ավազակների մի գլխավոր, ընդհանուր ուժ տվող և հայերի
համար շարիք դարձած մազմազակցի Խանլար-բեկը, սեպտեմբե-
րի 6-ին բանտից ազատվելով, երկու ստրաժնիկներ առած, Քա-
րահունջի սահմանի մոտով տուն էր վերադառնում: Մի քանի ան-
գամ բանտ մտած և ազատված այդ շարագործ բեկի վերջին ար-
դարացումը շատ ծանր տպավորություն թողեց մի քանի երիտա-
սարդների վրա, որոնք հետևելով նրան՝ Քարահունջի մոտ գնդա-
կահար արեցին: Ահա այդ անմասն հանցանքի համար Քարա-
հունջը ենթարկվեց մի բարբարոս էկզեկուցիայի: Մինչդեռ այս-
պիսի «հոգատար» ադմինիստրացիայի աչքի առջև տեղի էին ունե-
ցել մինքենդյան բարբարոսությունները՝ իրենց սրտաճմլիկ տե-
սարաններով և անցել-գնացել անպատիժ կերպով:

(19—22 օգոստոսի 1905 թ.)

Մինքենդը թուրքախառն մի գյուղ է՝ 145 տուն թուրք և 85 տուն հայ բնակիչներով, ընկած Գորիսից դեպի հյուսիս 25 վերստ հեռավորությամբ, Քեշտաղ գետի վրա, մի բլրապատ հարթ տեղում: Մինքենդի հայերը 1844 թ. գաղթել են այդտեղ Խնձորենկ գյուղից:

Հայերն ունեին լավ տներ՝ հաճախ երկհարկանի և թիթեղապատ տանիքներով: Նրանք պարապում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, մասամբ և առևտրով: Ունեին 21 խանութ զանազան ապրանքներով, ունեին նաև դպրոց՝ իր առանձին շենքով, ուր սովորում էին նույնիսկ թուրք մանուկներ: Ահա այս գյուղի հայ ժողովրդին վիճակված էր մի անօրինակ մարտիրոսություն՝ իր անօրինակ բարբարոսություններով:

Այն հանգամանքը, որ Մինքենդը ընկած էր հայաբնակ շրջաններից հեռու և շրջապատված բազմաթիվ թուրք գյուղերով, այդտեղի հայերի դրությունը վտանգավոր դարձավ հենց այն օրից, երբ մաշիսին Նախիջևանի գավառում տեղի ունեցան թուրքական զազանություններ: Այնպես որ դեռևս հունիսին նշմարվող հուզումների պատճառով, երբ գավառապետ Ավալիանին կոզակներով դուրս եկավ շրջագայելու, Մինքենդ հասնելով, այնտեղի հայերը դիմեցին նրան, խնդրելով կամ կոզակներ տա գյուղի պաշտպանության համար և կամ իրենց թույլ տա գյուղից քոչելու: Գավառապետը թույլ շտվեց գաղթելու, այլ 25 կոզակ թողնելով նրանց պաշտպանության համար, անցավ-զնաց: Սակայն մի քանի օրից հետո կոզակները ետ կանչվեցին, իսկ նրանց փոխարեն այդտեղ եկավ պրիստավ Սադրդ-բեկ Մելիք-Ասլանովը, որն էլ հենց դարձավ Մինքենդի ոճիրների նյութողը:

Մինքենդի հայերի դրուժյունը միանգամայն վտանգավոր դարձավ օգոստոսի սկզբներին, երբ տեղի ունեցան Խաչենի ձորակի դեպքերը, մանավանդ, երբ Մուղանլու, Խալաճ, Օվշար կոչվող թարաքյամաները (քոչվոր ցեղերը — խմբ.) եկան և իրենց վրանները խփեցին Մինքենդի դաշտում:

Այդ ժամանակ գավառապետ Ավալիանին գնացել էր Փշանիս գյուղը՝ այդտեղ թուրքերի ձեռքով խնածախցի անտառապահ Մարտիրոսյանի սպանության գործը քննելու: Փշանիսից գավառապետը վերադարձավ Մինքենդի վրայով, ուր հայերը վճռած լինելով ինչ էլ որ լինի քոչել այդտեղից, նորից դիմեցին նրան, խնդրեցին, աղաչեցին, նույնիսկ կախ ընկան նրա փեշերից՝ պահանջելով կողակներ տալ ուղեկցելու իրենց մինչև հայ գյուղերը: Ավալիանին այս անգամ էլ թույլ չտվեց և փոխանակ լուրջ միջոցներ ձեռնարկելու, կանչեց թարաքյամաների տանուտերերին և պատվիրեց նրանց շփալշել հայերին՝ համոզելով վերջիններիս շարժվել իրենց տեղից և ապահով լինել: Հայերից մի քանիսը շքավականացան գավառապետի կարգադրություններից, երբ երեխաների ձեռքից բռնած փորձեցին, օգտվելով նրա ներկայութունից, թողնել գյուղը, գավառապետը կողակներով կանգնեցրեց նրանց: Ահա այս բոլորից հետո, գավառապետը միայն 15 կողակ թողեց հայերի պաշտպանության համար, մի օր հետո Գորիսից նորից 25 կողակ ուղարկեց՝ կարգադրած լինելով Մինքենդի շրջանակներից հեռացնել քոչվորներին: Բայց Սադրղ-բեկը ոչ միայն քոչվորներին չհեռացրեց Մինքենդի սահմաններից, այլ կողակների մեծ մասին էլ ուղարկեց Շալվա և Օվշար, Մինքենդում թողնելով միայն 14 հոգի:

Այս դրուժյունը շարունակվեց մի քանի օր ևս, մինչև որ տեղի ունեցան Շուշիի և Գորիսի դեպքերը, որոնք Մինքենդի շրջանում հուզումներ առաջացրին:

Օգոստոսի 19-ին Մինքենդի հայերը թուրքերի մեջ բացահայտ հուզումներ նկատելով, քոչելու մի նոր փորձ արեցին: Պրիստավի մոտ ուղարկեցին գյուղի ծխատեր քահանա Տեր-Հակոբ Տեր-Մինասյանին, որը մեզ պատմեց հետևյալը. «Երբ ես մտա պրիստավի սենյակը, մի սարսուռ անցավ իմ երակների միջով, այնտեղ հավաքված էին մի քանի հայտնի թուրքեր, բոլորը հուզված, գրգռված, ոճրագործի դեմքերով: Այդտեղ էր շուշեցի Շահամար-բեկ

Քոչարլիներին՝ արտասովորից աչքերով, ձեռքին մի նամակ, որով Շուշիից հաղորդում էին նրա եղբոր սպանության մասին: Այնտեղ էր բայանդուրեցի Ամրաստան Մաշադի-Մուրադ օղլին, որը գանգատվում էր գործիսեցիների ձեռքով իր, իբրև, հինգ ազգականների սպանության առթիվ: Իմ ներս մտնելը այնպիսի շփոթություն առաջ բերեց նրանց մեջ, որ այլևս ինձ մեջ կասկած չմնաց, որ այդ ժողովում ծրագրվում էր մի ինչ որ դժոխային գործ: Իմ դիմումը ոչ մի հետևանք չունեցավ: Պրիստավ Սադրդ-բեկը սկսեց երգվել, հավատացնել, որ մեզ ոչինչ չի պատահի, որ մենք կարող ենք հանգիստ լինել: Չնայած այդ բոլորին, ես դուրս եկա ինձ ճնշող այդ սենյակից այն խորին համոզմամբ, որ այդ ժողովում ծրագրվում է Մինքենդի սոսկալի կոտորածը: Եվ իմ ենթադրությունը կատարվեց»:

Ահա քահանայի պատմության այդ նույն օրվա՝ օգոստոսի 19-ի երեկոյան, գյուղի այն կողմում, ուր սովորաբար գիշերում էին հայերի ոչխարները, հրացաններ պայթեցին և թուրքերը երեք հոտ ոչխար փախցրին: Հայերը դուրս եկան հավարի, բայց կարողացան ետ բերել միայն երկու հոտը, մեկը թուրքերը տարան:

Հաջորդ օրը քահանան նորից դիմեց պրիստավին և տալով նրան 100 ռուբլի, խոստացավ 1000 ռուբլի ևս, միայն այն պայմանով, որ ոչխարը ետ բերեր և իրենց պաշտպաններ: Իհարկե, պրիստավը փողը գրպանը դրեց, բայց ոչխարը ետ չեկավ: Ինչ վերաբերում է պաշտպանություն ցույց տալուն, այսօր միայն հայտնի է, որ հենց նույն օրը՝ օգոստոսի 20-ի երեկոյան, գյուղը պաշարվեց թարաքյամաներով՝ հրացանների որոտների հետ միաժամանակ:

Սկզբում գյուղը պաշտպանելու համար հայերի հետ միասին փողոց դուրս եկան թե կոզակները, և թե ստրաժնիկները, բոլորը միասին 32 հոգի, սակայն դա պրիստավի կողմից մի ստոր խաղ էր: Մի փոքր այս ու այն կողմ վազվզելով ներս քաշվեցին թե պրիստավը, թե կոզակները և թե ստրաժնիկները: Դավադրությունը կատարյալ էր: Թեև հայերը մի կարճ ժամանակ դիմադրեցին, բայց ապարդյուն: Շուտով գյուղի մյուս ծայրից լուր եկավ, որ թուրքերն արդեն ներս խուժեցին և կողոպտեցին Գաբրիել Օհանյանի և Իվան Հայրապետյանի խանութները, որ սպանվեցին Սարգիս Հայրապետյանը և Առաքել Բաղամյանը, որ կողոպտել սկսե-

ցին նաև տեղացի «քիրվա» թուրքերը: Հուսահատությունը տիրեց հայերին: Նրանցից որք իրեն ձգեց իր ծանոթ թուրքի մոտ և որն էլ այս ու այն կողմը փախավ, սարերն ընկավ: Թուրք խուժանը բռնորոշին ազատություն գտնելով՝ ամբողջ գիշերը կողոպտեց թե խանութները, և թե տների մեծ մասը:

Օգոստոսի 21-ի առավոտյան թարաքյամաներին միացան նաև տեղացի թուրքերը և կողոպուտը սկսեցին նոր թափով՝ միաժամանակ սպանելով պատահած հայերին: Նրանք հարձակվեցին էգիլյանի տան վրա և սրի քաշեցին ամբողջ ընտանիքը՝ յոթ հոգուց բաղկացած: Հարձակվեցին և սրախողխող արեցին փողոցում պատահած հայերին՝ թվով 13 հոգու: Այնպես, որ օգոստոսի 21-ի առավոտյան Մինքենդի փողոցներում ընկած էր արդեն 22 դիակ:

Եվ մինչդեռ թուրք խուժանը գազանացած ուզում էր հարձակվել և պահված տեղերից դուրս բերել հայերին և կոտորել, մի բարի թուրք՝ Սաֆար-Ալի-բեկը, այդ կոտորածի առաջն առնելու նպատակով մի սուտ հնարեց՝ բարձրաձայն աղաղակելով. «Ռուսաց և հայոց զորքերն եկան, փախեք, քանի շուտ է»: Այդ աղաղակը նպատակին ծառայեց: Խուժանը փախավ և միառժամանակ կոտորածը դադարեց, մինչև որ օգոստոսի 22-ին Գորիսից հասավ մի սպա 45 կողակներով, որը սկսեց հավաքել թաքնված և այս ու այնտեղ ցրիվ եկած հայերին:

Սակայն այդտեղ էլ կանգ չառավ ոճրագործ պրիստավը: Նա պատճառ բռնելով Խոզնավարում սկսված ընդհարումը, սպային կողակների հետ միասին հաջորդ օրը, օգոստոսի 23-ին, ուղարկեց Խոզնավար:

Երբ հայերն այդ իմացան, մի մասը գյուղից փախավ, իսկ մնացյալ մասը պատսպարվեց այսպես կոչված «Зазжий» տանը (իջևանատուն — խմբ.):

Ահա այդ տան վրա էլ հարձակվեց խուժանը՝ բաղկացած թարաքյամաներից, Մուլա-Ահմադյու գյուղի և տեղացի թուրքերից՝ այս անգամ արդեն գրագիր Շամիրի առաջնորդությամբ, որը Շալվա գյուղում լսելով իր հոր՝ Նավթալի-բեկի սպանության լուրը, մի քանի օր առաջ Մինքենդ էր եկել՝ իր բարեկամ պրիստավ Սազըղբեկի խորհրդով, հոր վրեժը լուծելու համար:

«Зазжий» տան բակում տեղի ունեցավ մի շտեմնված, շլրսված բարբարոս գործողություն: Մեկ առ մեկ անխափր բակը դուրս

բերեցին այնտեղ պատսպարված մարդկանց, կանանց և երեխաներին, ավելի քան 200 հոգու և սկսեցին սրերով, կացիններով և հազար ու մի բուխ գործիքներով կոտորել անխնա: Նրանցից շատ քչերն ազատվեցին: Գազանացած խուժանը այդտեղ կատարեց այն բոլոր քստմանելի գործողությունները, որոնք ընդունակ է երևան հանելու թուրք ամբոխը:

Թշվառ մարդկանց տանջանքներն ավելի տևողական դարձնելու համար, նախքան սպանելը մաս-մաս կտրատում էին նրանց մարմնի անդամները: Այդպես տանջանքների ենթարկվեցին 20 տարեկան Խաչատուր Դավթյանը, 60 տարեկան Մանուշակ Հայրյանը, որի նախ ստինքները կտրեցին և ապա ոտքերը: 22 տարեկան Համբարձում Գալստյանի մազերից բռնելով կոկորդը կրտրեցին ճիշտ այնպես, ինչպես «ղասաբը» ոչխարի գլուխը: 65 տարեկան Աննա Դավթյանցին և նրա երեք թոռներին՝ վեց տարեկան Գյուլնշանին, հինգ տարեկան Սառային և չորս տարեկան Անդրեասին մեկը մյուսի ետևից շարք կանգնեցնելով, Զաբրայիլ Շախսովարովը փորձեց մի գնդակի հարվածով շորսին միանգամից սպանել: Մանուշար Գրիգորյանի հղի կնոջ Նավոմի փորը պատռեցին և երեխային սրի ծայրին մեխած դուրս բերին արգանդից:

Բայց քանի-քանի սրանցից ավելի սոսկալի պահեր եղան, որոնց անուն-անուն նկարագրելը անկարելի է:

Այսպիսով Մինքենդի 696 բնակիչներից միայն 456-ը կարողացան, որը վիրավոր, որը սարսափից կմախք դարձած, փախչել, ազատվել, մնացյալ 240-ը չկային: Նրանցից հայտնի սպանվածների թիվը 197 էր, որոնց անունների ցանկը բերում ենք գրքի վերջում, իսկ 43-ը անհայտ կորած և գերի էին տարված, որոնցից 5 հոգու հնարավոր եղավ ազատել քոչվորների ձեռքից օգոստոսի 28-ին Շուշիի մոտ՝ գլուխներն արդեն թուրքի ձևով ածիլած:

Մինքենդի նյութական կորստին շափ չկար: Նրանք կորցրել էին ամեն-ամենը: Թուրքերը տարել էին 590 կով, եզ, գոմեշ, 1423 ոչխար, 149 ձի, էշ, ջորի, 1230 գորգ, 688 կարպետ, 183 ջեջիմ, 688 ջվալ, 344 թաղիք, 172 պղնձի կուժ, 457 պղնձի կաթսա, 1290 անկողին, 65 ինքնաեռ, 14 կարի մեքենա, 6520 ուրբլի արծաթ, 2700 ուրբլու ոսկե և արծաթե զարդեր, ամբողջ մթերքները...

Ահա այդ բոլորը ձգեց մինքենդցին և գնաց՝ այլևս չվերա-
դառնալու համար, այլևս չտեսնելու այն վայրը, որը դարձավ
նրա հարազատների սպանդանոցը:

Նա գնաց տնավեր, քաղցած, բազմաթիվ զոհերով և վշտա-
բեկ սրտով, բայց նրան ավելի շատ տանջում էր այն հանգաման-
քը, որ ոճրագործները չէին պատժվում, որ նրանք, ընդհակառակը,
խրախուսանքներ էին գտնում պաշտոնյաների կողմից:

(Օգոստոս—դեկտեմբեր 1905 թ.)

Այս հինգ գյուղերը ճիշտ և ճիշտ այն պայմաններում էին գտնվում, ինչ պայմաններում, որ գտնվում էր Մինքենդը: Սրանք ընկած են միմյանցից հեռու, հայաբնակ շրջաններից կտրված, թուրք տարրերով շրջապատված, իսկ առաջին երեքը՝ նաև թուրքական:

Դրանցից Խոզնավարը, որ գտնվում է Մինքենդից դեպի հարավ-արևելք մոտ 15 վերստի վրա, ուներ 80 տուն հայ և 40 տուն թուրք բնակիչ: Խնածախը ընկած է Խոզնավարից դեպի հարավ-արևելք 4 վերստի վրա, ուներ 188 տուն հայ և 50 տուն թուրք բնակիչ: Զեյվան (չպետք է շփոթել Կապանի Զեյվա՝ Դավիթ-բեկ գյուղի հետ— խմբ.), որը գտնվում է Մինքենդից դեպի արևելք 10—12 վերստի վրա, ուներ 25 տուն հայ և 100 տուն թուրք բնակիչ: Ալիղուլին*) ընկած է Մինքենդից դեպի արևելք 15 վերստ հեռավորությամբ, Հազարա գետի վերին հոսանքի մի փոքր ճյուղի վրա, Մաղավուզի ձորում, զուտ հայաբնակ գյուղ էր և ուներ 100 տուն բնակիչ: Հարարը նույնպես զուտ հայաբնակ էր և ուներ 135 տուն բնակիչ, սակայն նա ընկած էր ավելի հեռու, ավելի վատ տեղում, այն է՝ Հազարա գետից դեպի արևելք, Զաբրայիլի սահմանների մոտ մեն-մենակ: Վերջին երկու գյուղերը շրջապատված են միապաղաղ, անհանգիստ թուրք տարրերով: Առաջին երկու գյուղերը նույնպես շրջապատված են թուրքերով, սակայն նրանց մեջ առանձնապես աչքի էին ընկնում որպես ավազակաբարո

*) Այս անունը չպետք է շփոթել Գորիսի շրջանի Ալիղուլի (Արեգունի) գյուղի անվան հետ, այս անունով հայաբնակ գյուղերը երկուսն են Բուն-Զան-գեղուրում:

գյուղեր՝ Բայանդուրը և համանուն, ձորակի մի շարք, դշլաղներ, որոնք մեծ դեր էին խաղում ինչպես Մինքենդի, այնպես էլ մյուս գյուղերի վրա տեղի ունեցող հարձակումների մեջ, միաժամանակ վտանգավոր դարձնելով Շուշի—Գորիս խճուղին:

(Մանրություն.— Խողնավար, Խնածախ և Բայանդուր (Վաղատուր) գյուղերը 1920 թ. հայ բնակչությանը մտան Գորիսի շրջանի մեջ, Զեյվան, Ալիգուլին, ինչպես Մինքենդը, հայաթափվեցին և անցան կաշինի շրջանին, իսկ Հարարը (փոքրաթիվ հայերով) միացավ Կուբաթլուի շրջանին— խմբ.):

Ահա այսպիսի պայմանների մեջ, հասկանալի է, թե ինչ վիճակ ստեղծվեց հիշյալ գյուղերի համար այն օրից, երբ Մինքենդը մի սոսկալի սպանդանոց դառնալով հանդերձ, այնուամենայնիվ գլխավոր ուժրագործները դեռ շարունակում էին պաշտոնների մեջ մնալ:

Եվ իսկապես, այս գյուղերի շուրջը հուզումները նկատելի դարձան դեռևս օգոստոսի 16-ից սկսած, իսկ բուն դանդաժացին հարձակումներ տեղի ունեցան Մինքենդի կոտորածի հետ միաժամանակ:

Թե ինչեր անցան ու դարձան այդ հինգ գյուղերի գլխով օգոստոսին 20—24-ին, ավելորդ ենք համարում մանրամասն առաջ բերել, մենք կարձանագրենք միայն այն փաստացի տեղեկությունները, որոնք բնորոշում են ավերումների շափր:

Նախ պետք է ասենք, որ այս հինգ գյուղերում այնպիսի կոտորած, որպիսին մենք տեսանք Մինքենդում, տեղի չունեցավ: Նախ՝ Հարար գյուղը անձնատուր եղավ և թույլ տվեց խուժանին կողոպտելու եղած-չեղածը առանց դիմադրության: Զեյվա գյուղից ժողովուրդը փախավ նախքան մեծ հարձակումը: Իսկ մնացած երեք գյուղերը կանոնավոր դիմադրություն ցույց տվին: Եվ երկրորդ՝ այս գյուղերը բախտավորություն ունեցան դուրս մնալու պրիստավ սաղղբեկների «պաշտպանությունից»: Լինեին այս գյուղերում մի-մի սաղղբեկեր, թերևս արչուներ ավելի մեծ շափով հոսեր, քան նույնիսկ Մինքենդում: Չնայած այս բոլորին, այս հինգ գյուղերը, այնուամենայնիվ ազատ շմնացին կողոպուտներից և հրդեհումներից:

Հնգօրյա կռիվներից հետո, Խողնավար գյուղը, ունենալով նաև կողակների պաշտպանությունը, կարողացավ ետ մղել հարձակում-

ները, թուրքերին պատճառելով մեծ կորուստներ: Տեղացի թուրքերը, մեծ մասամբ բեկեր, որոնք և ծրագրել էին հարձակումները, ստիպված եղան փախչել գյուղից, որոնց տները հայերի ձեռքով հրդեհվեցին: Սակայն կորուստներ ունեցան նաև հայերը: Նախքան թուրքերին բոլորովին հալածելը, նրանց ձեռքով կողոպտվեցին 60 տուն, որից 30-ը հրդեհվեցին: Խողնավարում հայերից սպանվեցին 12 մարդ: Դրանք էին՝ Սարգիս Ավանեսյանը (45 տարեկան), Յախշի Պետրոսյանը (30 տ.), Իսաչան Շափաղաթյանը (25 տ.), Մաթևոս Ղուկասյանը (28 տ.), Փարսի Մանուչարյանը (65 տ.), Գրիգոր Մաթևոսյանը (65 տ.), Առաքել Պետրոսյանը (50 տ.), Աստվածատուր Գրիգորյանը (18 տ.), Սարգիս Առուստամյանը (33 տ., խելագար) և մի անդամալույծ օրիորդ 40 տարեկան:

Խնածախը, շնորհիվ իր դիրքերի և տոկուն դիմադրության, ազատ մնաց կողոպուտներից և հրդեհից, թեև ընդհարումների ժամանակ ունեցավ վեց զոհ:

Զեյվան ունեցավ հինգ զոհ և, բացի այդ, ենթարկվեց կողոպուտի, կորցնելով ունեցած գույքի կեսից ավելին և քոչեց գյուղից՝ այլևս անկարող լինելով ապրել այդտեղ:

Ալիդուլին պաշարվեց տեղացի և քոչվոր թարաքյամաների մի ահագին խուժանով, բայց երկու օր կարողացավ հերոսաբար դիմադրել, մինչև որ Գորիսից զորք հասավ, թեև մինչև այդ գյուղի մեծ մասն արդեն կողոպտվել էր և հրդեհվել: Զորքերի գալով թուրքերը ետ մղվեցին մեծ կորուստներով: Հայերն ունեցան բավական թվով սպանվածներ, որոնց ցուցակը բերված է գրքի վերջում: Չնայած կովի այսպիսի վախճանին, հայերն այդ դյուղում այլևս ապրելն անհնարին համարելով, ձգեցին ամեն ինչ և դուրս եկան մի այլ տեղ բախտ որոնելու:

Բոլորից վատթար վիճակ ունեցավ թշվառ Հարարը՝ այդ կորած-մոռացված գյուղը: 135 տուն ժողովուրդը կողոպտվեց մինչև վերջին թելը, վերջին ասեղը: Ապա նա գերի ընկավ շրջապատող թուրքերի ձեռքը: Խեղճ հայեր, օրեր շարունակ նրանք ապրում էին մահվան սարսափի, բարոյական և հոգեկան տանջանքների տակ: Նրանք կտրված դրսի աշխարհից, շգիտեին, թե ինչ է կատարվում դրսում, ինչ վախճան է սպասվում իրենց: Եվ երբ այդ բոլորից հետո զորքը գնաց նրանց ազատելու, նրանք չէին հավատում իրենց աչքերին: Ինչպես դահճի սրից փախածը, նրանք հեռացան

այդ հարազատ վայրերից՝ այլևս չվերադառնալու պայմանով, գնացին մի այլ տեղ ապաստան փնտրելու: Հարարն ունեցավ բավական մարդկային զոհեր, որոնց ցուցակը նույնպես բերվում է գրքի վերջում:

Ահա այս բոլորը կատարվել վերջացել էր, երբ օգոստոսի 31-ին Գորիս ոտք դրեց նոր նշանակված գեներալ-նահանգապետ Պրինց Նապոլեոնը և սեպտեմբերի 1-ին փոխարքային ուղարկեց մի քննարձակ հեռագիր, որից բերում ենք հետևյալ քաղվածքը.

«Երևանի և Նախիջևանի դեպքերի ազդեցության տակ հարաբերությունները մահամեղականների և հայերի մեջ դասվում էին գավառապետի ձեռքով և անհատական դեպքերով էին արտահայտվում: Շուշիի դեպքերը խիստ ազիտացիա առաջացրին հայերի դեմ թափառականների մեջ, Զանգեզուրի գավառի սեյիդների և մի քանի ազդեցիկ անձանց կողմից: Այս բանի հետևանքն եղավ այն, որ թափառականները վճռեցին իջնել իրենց քոչատեղերից և ճանապարհին, վրեժ առնելու համար, թալանել հայոց գյուղերը: Շուշիի և Զավադի գավառների թափառականների մի խումբ, որ տուն էր դառնում Մինքենդի միջով օգոստոսի 20-ի, լույս 21-ի գիշերը, հարձակվեց գյուղի վրա, թալանեց և այրեց, սպանելով 17 հայերի: Հետո ուղևորվեց Ալիդուլիշեն, ուր հասավ օգոստոսի 24-ին և տեսավ, որ այդ գյուղն արդեն պաշարել են Զանգեզուրի գավառի երեք հասարակությունների բնակիչները: Գյուղը թալանվեց, իսկ 24 տներ հրդեհվեցին: Օգոստոսի 25-ին Գորիսից եկած գավառապետին հաջողվեց ցրել թափառականներին և թուրքերին, բայց նույն օրը՝ երկրորդ փորձը արվեց պաշարելու գյուղը, շնայած որ գյուղում գտնվում էր գավառապետը՝ 70 կողակներով: Այդ փորձը շահաջողվեց, հրացանածգության ժամանակ սպանվեց մի կողակ, 7 հայ, շատ մահամեղականներ: Դեռ օգոստոսի 22-ին այն գյուղերի սլաշտպանության համար, որոնք գտնվում են թափառականների վերադարձի ճանապարհին, գավառապետը Մինքենդ գյուղն էր ուղարկել պահապանների սպային՝ 63 կողակների և ստրաժնիկների հետ: Այստեղ սպան տեղեկություն ստացավ, որ թափառականները հարձակվել են Խողնավար գյուղի վրա: Պրիստավ Մելիք-Ասլանովը սպային խաբեց, ասելով, որ Մինքենդին նոր վտանգ չի սպառնում, ուստի սպան մի քանի մարդկանց հետ պրիստավին թողնելով այդ գյուղում, մնացածները

րին վերցրած օգոստոսի 23-ին գնաց Խոզնավարցիներին ազատելու: Նրա հեռանալուն պես, Մինքենդի մահմեդականները հարձակվեցին հայերի վրա, կոտորեցին մոտ 140 մարդ և վիրավորեցին 40 հոգի: Այս բոլորը տեղի ունեցավ պրիստավի աչքի առաջ, որը ոչ միայն աջակցութուն ցույց չտվեց, այլ նույնիսկ շհայտնեց սպային հարձակման մասին, որի պատճառով դավառապետն իսկույն հեռացրեց նրան պաշտոնից, մինչև դատաստանական պատասխանատվության ենթարկվելը»:

Հեռագիրը փոխարքային ուղարկելուց հետո, Նապոլեոնն այցելելով Մինքենդ, Խոզնավար և Ալիդուլի գյուղերը, խստությամբ կարգադրեց հետ պահանջել բոլոր կողոպտվածը, անմիջապես բանտարկել բոլոր շարագործներին, էկզեկուցիայի ենթարկել հարձակումներին մասնակցած գյուղերը, գյուղից հեռացնել Մինքենդի թուրքերին և հայերին բերել համախմբել մի տեղում:

Խիստ մխիթարական էին հայերի համար Նապոլեոնի կարգադրությունները և անաշառ վերաբերմունքը դեպի բարբարոսները: Բայց միամիտ էր մարդասեր ասպետ Ֆրանսիացին: Նա կարծում էր, թե ինքը կարող է արցունքներ սրբել և վիշտ մաքրել: Նա պահանջում էր արդար հատուցումը ոճրագործներին և նյութական բավականություն կողոպտվածներին: Այդ նույնը նա ծրագրել էր նաև Նախիջևանի և Շարուր-Բարալագյազի դավառների նկատմամբ, բայց սեպտեմբերի 18-ի Երևանի երրորդ ընդհարումը մի ժամում ճնշած Նապոլեոնը թողեց Ջանգեզուրի, ինչպես նաև Երեվանի նահանգապետության պաշտոնը և հեռացավ՝ ասպարեզը տալով գեներալ Տակաչիշվիլուն, որը հիմնովին ըմբռնած լինելով այդ պաշտոնի իմաստը Կովկասի իրականության մեջ, ինչպես Շուշի, այնպես էլ Ջանգեզուր ոտք դնելով, մեղադրեց հայերին՝ բանտարկելով Գորիսում 10, Տեղ գյուղում՝ 15 հոգու, մինչդեռ գլխավոր շարագործների՝ պրիստավ Սադրդ-բեկի, զրագիր Շամիրի և Իլդրիմ-բեկի մասին և ոչ մի կարգադրություն չարեց:

Եկավ ահագին հույսեր ներշնչող Նապոլեոնն էլ և գնաց, սակայն իրականության մեջ ոչ մի փոփոխություն չմտավ: Կառավարության վրա հույս դնելն անմտություն էր, ուստի պետք էր սեփական միջոցներին վստահել: Այս էր թելադրում իրականությունը, ուստի այժմ էլ ավերել սկսեցին հայերը, այդ համարելով միակ միջոցը՝ զսպելու թուրք անգիտացած զանգվածին: Իսկ

առիթներ որքան կամենայիք: Օր շկար, որ թուրքական հարձակում տեղի շունենար այս կամ այն գյուղի սահմանների և նախիրների վրա:

Սեպտեմբերի 22-ին Բայանդուր գյուղի թուրքերը՝ Բայանդուրի ձորակի մի շարք գյուղերի խուժանի գլուխն անցած, նորից հարձակվեցին Խոզնավարի և Խնածախի վրա, շկարողանալով մոռանալ այն զոհերը, որ նրանք տվել էին օգոստոսյան հարձակումների ժամանակ: Երկու օր տևած կռիվը վերջացավ թուրքերի պարտությամբ: Այս անգամ հայերը շրջականերից բավական օգնություն ստանալով, մի ուժեղ հակահարձակումով մտան թուրք գյուղերը և այրեցին ու ավերեցին՝ Բայանդուրը (50 տուն), Հալաքը (35), Բինաերին (15), Քոսալարը (25), Մալիբեկլին (50), Ջաղագուրը (40), Չայլուն (10), Քյալավալախը (25) և Նովրուզլուն (15) տուն բնակիչներով: Այս գյուղերից առաջին երեքը կողոպտվեցին, որոնց տներից դուրս հանվեցին Մինքենդի հայերից կողոպտված բավականաչափ իրեր: Իսկ մյուս գյուղերի բնակիչները կարողացան փախչել՝ իրենց հետ տանելով գույքը: Ահա այս գյուղերի մեծ մասը մինչև այժմ էլ ավեր է:

Սակայն ընդհարումները սրանով էլ չվերջացան: Դեկտեմբերի 15-ին Հաջիլար գյուղի թուրքերը հարձակվեցին և Խոզնավարի սահմաններից քշեցին 100-ի շափ տավար, իսկ նախրշուն գերի տարան: Խնածախը օգնության գնաց և պաշարեց Հաջիլարը, որի ժամանակ հայերից վիրավորվեցին 7 հոգի, իսկ թուրքերից սպանվեցին 5-ը:

Խոզնավարը նորից հարձակման ենթարկվեց հունվարի 7-ին, ապա հունիսի 24-ին, որի ժամանակ թուրքերի ձեռքով սպանվեց հայ պրիստավ Բադրատ-բեկ Ասրիովը, և ապա՝ հուլիսի 6-ին, որի ժամանակ թուրքերը քշեցին գյուղի նախիրը: Հուլիսի 6-ին հարձակման ենթարկվեց նաև Խնածախը, այս անգամ մալիբեկլուցի ավազակ Նադի Հուսեյն օղլու ղեկավարությամբ: Սակայն հայերի գնդակներից սպանվեցին ինքը՝ ավազակ Նադին, Մարիբեկ Բեկլար-բեկ օղլին, Իսա Օրուջ-Ալի օղլին և երկու այլ թուրքեր: Խուժանը ետ փախավ, գյուղը մնաց անվնաս:

(Դեկտեմբեր 1905 թ.)

Գորիսից դեպի հյուսիս-արևելք, 15 վերստ հեռավորության վրա, գտնվում են շորս հայաբնակ գյուղեր, այն է՝ Արավուար, Քարաշենը, Կորնիձորը, իրենց կենտրոնում ունենալով 700 տնից բաղկացած Տեղ գյուղը՝ հայտնի հացահատիկի մշակությամբ: Սրանք ընկած են մի ընդարձակ սարահարթի վրա, բավական հեռու խիտ թուրքաբնակ վայրերից: Միայն Կորնիձորից հարավ ընկած են մի քանի թուրք գյուղեր, որոնց թվում՝ նաև երկու Զեջիմլունները, մեկը 102, իսկ մյուսը՝ 26 տնից բաղկացած:

Հայ գյուղերի այս խմբակը, մյուս խմբերի համեմատ, կարելի է ասել, ազատ մնաց խոշոր ընդհարումներից, սակայն նա ազատ չմնաց մասնակի հարձակումներից: Տեղի էին ունենում նախիրների քշելու դեպքեր և անհատական սպանություններ, որոնց զոհերը հաճախ ավելի զգալի էին լինում, քան նույնիսկ մի խոշոր ընդհարման:

Այսպես, սեպտեմբերի 22-ին կորնիձորցի 36 ճամփորդներ թաթլու-Դարայում ենթարկվեցին Բաղրբեկլու, Թաթ-Դարա, Սյումուքլու և Յուղանիս գյուղերի թուրքերի հարձակման: Նրանցից ութ հոգին՝ Կարապետ և Մարտիրոս Աբրահամյանները, Բաղդասար Պետրոսյանը, Հարություն Հովհաննիսյանը, Կոստանդին Բախշյանը, Աղասի Մկրտչյանը, Պետրոս Մարտիրոսյանը և Շափաղաթ Գրիգորյանը սպանվեցին՝ ամբողջ գյուղը թողնելով սգի մեջ:

Մասամբ այս և մասամբ այլ բաների շնորհիվ, որ այս գյուղերը (խոսքը վերոհիշյալ շորս հայկական գյուղերի մասին է խմբ.) իրենց բավական ուժեղ էին զգում, իրավունք համարեցին խախտել հայ ժողովրդի կուլտուրական կենցաղին վայել դրացիական ներողամտությունը և հարձակվեցին ավերեցին երկու Զե-

ջիմլու գյուղերը՝ վրդովված վերջինների կողմից կատարված մի
երկու ավազակային գործողութիւններից:

Ջեջիմլուները սյունիներ էին և բնականաբար ավելի մեղմ
բարքերով սնված, քան շիաները, սակայն այդ հանգամանքը շար-
գելեց նրանց ընկնել կողոպուտների հմայքի ազդեցութեան տակ
և օգտվել առիթից, որն էլ եղավ նրանց ավերման պատճառը:

(Մանրութեամբ. — Հեղինակը այս իմաստով սխալվում է: Որովհետև ընդ-
հանրապես մուսուլմանութեան (շիաների և սյունիների) մեջ մեղմ բարքեր չկան:
Եթե շիաները ավելի կրօնամուլ են և անվերապահ ատելութիւն ունեն դեպի
քրիստոնյաները, ապա սյունիները դրա հետ միաժամանակ ավելի վայրենի են,
ավելի ավազակաբարո, գող և անկիրթ — խմբ.):

Կորնիձորի և մյուս գյուղերի հանդերից ջեջիմլուեցիները մի
քանի անգամ տավար գողացան, սակայն նրանք հասարակ գողու-
թիւններով չբավականացան: Դեկտեմբերի 17-ին հարձակվեցին
և Տեղ գյուղի հանդերից քշեցին նախիրը: Ահա այս առիթ դարձավ,
որպեսզի հայերը իրենց հերթին հարձակվեին Մեծ Ջեջիմլուի վրա:
Փոքր Ջեջիմլուն բոլորովին կողոպտվեց, իսկ Մեծ Ջեջիմլուի ժո-
ղովուրդը կարողացավ փախչել, իր հետ տանելով գույքի մեծ մա-
սը: Տները ենթարկվեցին կողոպուտի և ավերման:

Բարբարոս միջավայրը կարճ ժամանակում այսպիսի հակում-
ներ ներշնչեց հայ խաղաղ ժողովրդին, որը հաճախ ինքնամոռա-
ցութեան մեջ էր կատարում նման գործողութիւններ:

Սրանք փաստեր էին, տխուր փաստեր, որ շարձանագրել
չէինք կարող, որքան էլ անհաճու լինեին շատերին:

(1905 թ. սեպտեմբեր—1906 թ. փետրվար)

Գորիսը Շուշիի հետ կապված է մի երկար խճուղով, որը քմահաճ ելևէջներով ձգվում է լեռնանցքների, ձորերի ու հովիտների միջով, երբեմն բարձրանալով կատարների վրա, երբեմն իջնելով մթին ձորերի հատակը:

Այդ խճուղին Շուշիից դեպի հարավ, անթիվ բլուրների և ձորերի կողերը տաշելով և 20 վերստ ակոսելով, մի ոլորապտույտ գծով, հասնում է Ղարաբաղի լեռնաշղթայի ամենաբարձր, միևնույն ժամանակ գավառի սահման կազմող գծին, ուր շինված է առաջին կայարանը՝ Թթու-ջուրը կամ Լիսագորը: Այդտեղից նույնպիսի մի ոլորապտույտ իջնում է մի խորունկ ձոր, որի միջով հոսում է Հագար գետը և նորից մի վերելք կազմելով, ձգվում է դեպի Տեղ գյուղը, ապա՝ Գորիս: Այդ խճուղին իր ամբողջ երկարությամբ ունի 90 վերստ, իսկ Շուշիից մինչև հայաբնակ Տեղ գյուղը՝ 70 վերստ տարածություն: Ահա այդ երկար ուղին ձգվում է թուրքաբնակ գյուղերի սահմաններով, որի պատճառով նույնիսկ սովորական ժամանակ համարվում է անապահով: Դժվար չէ երեվակայել, թե ինչ կլինեն այդ գծով ճանապարհորդող հայերի դրությունը հայ-թուրքական ընդհարումներից հետո: Այդ ճանապարհը ընդմիշտ փակված կմնար հայերի համար, ինչպես Աղղամինը: Նա կդառնար թուրք հրոսակախմբերի համար մի ընդարձակ ասպարեզ արշավելու դեպի Շուշի, որն առանց այն էլ ապրում էր ավազակաբարո Ջարսու և Խալֆալու թուրք գյուղերի սարսափի տակ և վերջապես կընդհատվեր հարաբերությունը Շուշիի և Գորիսի միջև՝ մի անտանելի կացություն ստեղծելով Ջանգեզուրի հայ ժողովրդի համար, եթե միայն չլինեն մի խոշընդոտ:

Այդ խոշընդոտը Ղարաղշլաղն էր, միակ հայ գյուղը այդ 70 վերստ տարածության վրա, միակ հայ գյուղը այդ կորած սարերի

և ձորերի մեջ, շրջապատված բազմաթիվ թուրք լեռնաբնակ ցեղերով:

Ահա այդ խոչընդոտը մեջտեղից վերացնելու համար տեղի ունեցան մի շարք բազմամբոխ հարձակումներ՝ Շուշիի ընդհարման օրերից սկսած:

Ղարաղջլաղը կամ Ղալաղարասին (Բերդաձոր— խմբ.), այժմ 600 տնից բաղկացած այդ մեծ գյուղը, գտնվում է Թթուջրից մի քանի վերստ դեպի Հագար գետի ձորը, անմատչելի բլուրների վրա: Նա նման չէ հայաբնակ մյուս գյուղերին՝ սղմված, կուշ եկած, այլ տարածված է հպարտ գագաթների վրա, մի անօրինակ վստահությամբ, կաղմելով 20 մանր ու մեծ թաղեր:

Շահնաբար գագաթից փոքր-ինչ ցած, խճուղուց դեպի արևվելք, ձորի հատակից մի անօրինակ ըմբոստությամբ բարձրացած մի բլուրի վրա, որպես սրաթև արծիվ, բազմած է Ղարաղջլաղի կենտրոնական մասը՝ 300 տնից բաղկացած: Դրանից երկու վերստ դեպի հարավ ընկած է երկրորդ մեծ հատվածը՝ մոտ 100 տնից բաղկացած՝ Քյոհնա-Շեն անունով, իսկ դեպի արևմուտք, խճուղու հակառակ կողմի վրա, ընկած է երրորդ հատվածը՝ 80 տնից բաղկացած՝ Եղծեվող անունով: Այնուհետև գալիս են մի երկար շարք, անուններ, այն է՝ 1. Սարեն-կյումեր (12 տուն), 2. Կանաչ-Թալահ (15 տուն), 3. Տշտվող (10 տուն), 4. Քրզեկեն-ձոր (8 տուն), 5. Խերխան (9 տուն), 6. Փոքր-Խերխան (12 տուն), 7. Շոռեն-Թալահ (7 տուն), 8. Չոբան-գյունեյ (15 տուն), 9. Թավան-Ավի (8 տուն), 10. Ղոմանավող (5 տուն), 11. Հգիզվող (8 տուն), 12. Պիժախութ (Բժշկաբլուր), (4 տուն), 13. Ղզարա-կյումատեղ (Ղազարի գոմերի տեղ), (7 տուն), 14. Իլանանց (6 տուն), 15. Բղլավար (6 տուն), 16. Ղոզլուփեհե (գոմ), 8 տուն, 17. Թումասեն (10 տուն), Սրանք՝ այս մանր թաղերը փռված են ամբողջ 15 վերստ տարածության վրա, ըմբոստ քերձերից և կրճքերից կախ ընկած, կուսական այդ վայրերին իշխելու մի արտասովոր վստահությամբ: Սրանք աուլներ են, հայկական աուլներ, աղքատ բնության, բայց ազատ կատարների հետ ամուր կապված, կենցաղի և բարքերի կոպիտ ձևերով, բայց լեռնականին հատուկ պարզությամբ ու քաջությամբ, շնորհիվ որի նա այսօր կարողացել է իր գոյությունը պահպանել և Շուշի—Գորիս խճուղին անվտանգ դարձնել:

Ահա այս արծվի բույնը քանդելու համար, սեպտեմբերի 20-ին, Բաղր-բեկու, Ունաննավ և Սաֆիան գյուղերի թուրքերը միացած, առաջին անգամ հարձակում գործեցին Ղարաղշլաղի Քյոհնա-շեն գյուղի վրա: Կռիվը երկար շտեկեց: Քաջ Ղարաղշլաղցին մի հակահարձակումով ետ քշեց թուրքերին մինչև Բաղր-բեկու, որտեղից ժողովուրդը փախավ՝ գյուղը թողնելով հայերի ձեռքին, կողոպուտի ու հրդեհի բաժին: Հարձակումն ավելի մեծ ուժով կրկնվեց այդ դեպքից երեք օր անց: Այս անգամ կռիվն ավելի ծանր էր և տևական: Թուրքերը հրդեհեցին 20—30 դոմ, մինչև անգամ մոտեցան գյուղի սահմաններին, բայց Քյոհնա-շենին օգնության հասան նույնիսկ հեռավոր թաղերի հայերը և ետ մղելով հարձակումը, խուժեցին թուրք գյուղերի վրա: Սակայն վրահասավ գավառապետ Ավալիանին զորքով և ազատեց թուրք գյուղերը ավերումից: Այս կովում հայերից սպանվեց մեկ հոգի՝ Սահակ Սարուխանյանը, երկու հոգի էլ վիրավորվեցին, իսկ թուրքերը ունեցան շատ զոհեր, որոնց թվում նաև բեկեր:

Երրորդ մեծ հարձակումը տեղի ունեցավ դեկտեմբերի 28-ին: Այս այն միջոցն էր, երբ Շուշիում և Ասկերանի շուրջը թշնամական հարաբերությունները նորից սուր բնույթ էին ստացել: Այս անգամ հարձակմանը մասնակցում էին շատ հեռու տեղերից եկած, այն է՝ Հաջի-սանլու, Բազար-դուզ, Սեյիդլար, Արաբլու և այլ գյուղերի թուրքերը: Ղարաղշլաղը պաշարվեց միաժամանակ մի քանի կողմերից: Այս կռիվը տևեց մի ամբողջ օր, կատաղի ուժով: Կատաղի կռիվ տեղի ունեցավ մանավանդ Սարոբաբ սարի շուրջը, ուր դիրք էին գրավել թուրքերը: Բայց այս հարձակումը նույնպես ետ մղվեց, և հայերն առաջ գնալով ավերեցին Քյարահուզ և Ունաննավ գյուղերը, առաջինը մեծ չափով հանդերձ սպանություններով, իսկ երկրորդը՝ փոքր չափով: Այս կովի ժամանակ հայերն ունեցան երեք վիրավոր, իսկ թուրքերը անհայտ քանակությամբ սպանվածներ:

Չորրորդ մեծ հարձակումը, դարձյալ անհաջող վախճանով, տեղի ունեցավ փետրվարին Եղծեվոզ գյուղի վրա, որի ժամանակ թուրքերից սպանվեց, ի միջի այլոց, ջաղագուրցի մուլլա Գեյուշը, իսկ հայերից մեկ հոգի՝ Ալեքսան Միքայելյանը: Հարձակումները տեղի ունեցան մի քանի անգամ ևս, բայց ամեն անգամ էլ անհաջող հետևանքներով:

Սակայն Ղարաղըլաղի շուրջը տեղի ունեցող ընդհարումները այսքանով չէին սահմանափակվում: Նա թեև ազատ մնաց զանգվածային խուժումներից, բայց զերծ չմնաց գաղտագողի սպանություններից: Բավական զարաղըլաղցիներ սպանվեցին և կենդանի հափշտակվեցին Շուշիի ճանապարհին Ղարալուի թուրքերի ձեռքով: Նման գործողությունների դիմում էր նաև զարաղըլաղցին: Այսպիսի սպանության զոհ գնացին մայիսին 13 զարաղըլաղցի պատանիներ, որոնք դուրս գալով Ճոպոր աղբյուրի մոտ զբոսանքի, միասին ընկան գազանացած թուրքերի սրերով: Այդ պատանիներն էին՝ Աբրահամ, Սարուխան, Պետրոս, Սահակ, Թյունի, դարձյալ Թյունի, Բախշի, Դանիել, Առստամ, Միրզա, Ղարա, Մանիա և Ասլան:

Չնայած այս բոլորին, մինչև այսօր էլ զարաղըլաղցին իր ազատ լեռների տերն է, և իր քաջությամբ պատկառանք ազդելով շրջակա անհանդիստ թուրք տարրերի վրա, հնարավորություն է տալիս հայերին երթևեկելու Շուշի—Գորիս խճուղով՝ ազատորեն:

(Հունվար—օգոստոս 1906 թ.)

Գորիսից դեպի հարավ, Որոտան գետի ձախ ափին, միմյանցից հեռու, հաջորդաբար ընկած են՝ Յայջի (Հարժիս— խմբ.), Հալիձոր, Շինուհայր և Խոտ գյուղերը, իսկ գետի աջ ափին՝ Երիցաթումբը (Բարձրավան— խմբ.): Այս գետերից դեպի հարավ, բավական բարձր լեռների կուտակումների մի վիթխարի սարահարթի վրա, անդնդախոր մի ձորի ժայռոտ եզերքին կառուցված է Տաթևի հռչակավոր վանքը՝ իր ինքնատիպ շարժուն սյունով: Իսկ վանքի շրջապատում, խորունկ ձորակներով միմյանցից բաժանված ընկած են համանուն Տաթև, Սվարանց և Տանձատափ գյուղերը:

Տաթևից դեպի հարավ-արևելք յոթ վերստի վրա բացվում է Չայ-Ջամին ձորակը՝ համանուն գետակով, որը գնում-խառնվում է Որոտանի ստորին հոսանքին: Այդ ձորակի մեջ ընկած են մի շարք թուրք գյուղեր, այն է Աղվանին (25 տուն), Տանձավերը (50 տուն), Մաճը, Քյուրդ-Ղալան, Շամսուզը:

Տանձավեր գյուղը պատկանում է Սուլթանով բեկերին, որոնք ահագին դեր խաղացին Զանգեզուրի հայ-թուրքական ընդհարումների մեջ, ինչպես այդ տեսանք Գորիսի դեպքերի ժամանակ:

(Ծանոթություն.— Ուշագրավ է այն փաստը, որ հայ-թուրքական ընդհարումներից ուղիղ քսան տարի առաջ տպագրված Աշխարհագրում (Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 98—102) վերոհիշյալ թուրք գյուղերից միայն Տանձավերն է նշված՝ 75 բնակիչներով, այն էլ որպես դաղթականներ և ոչ թե գյուղական համայնք, իսկ մյուս գյուղերը թուրքերով բնակեցված չեն եղել— խմբ.):

Տաթևից մի ճանապարհ Տանձավեր և Աղվանի գյուղերի սահմանով անցնում է դեպի Ղափան: Ահա այս ճանապարհը հիշյալ թուրք գյուղերի պատճառով վտանգավոր դարձավ դեռևս 1905 թ.

դարնան ամիսներից, իսկ հուլիսից երթևեկությունը միանգամից դադարեց, մանավանդ Ինչաբելի կոչված տեղում թուրքերի ձեռքով Կավարտ գյուղացի Կոստի Աղայանի սպանությունից հետո: Թուրքերը հասան իրենց նպատակին: Երկու շրջանների մեջ հարաբերությունները երկար ժամանակ ընդհատվեցին:

Սակայն այսքանով շքավականացած, թուրքերը հունվարի 4-ին մեծ ուժով հարձակվեցին Երիցաթումբ գյուղի վրա: Տաթևի շրջանում բոլորից թույլ և հեռու ընկած գյուղը համարվում էր Երիցաթումբը: Չնայած այդ բանին, թուրքերը ետ փախան, մի քանի սպանված տալով, որոնց թվում սեյթաղեցի հայտնի ավագակ Դարան:

Սակայն մինչ այդ, դեկտեմբերի վերջերին Սիսիանում տեղի ունեին խոշոր ընդհարումներ՝ երկու կողմերի բազմաթիվ զոհերով հանդերձ: Աղուղի և Վաղուղի գյուղերի մոտ տեղի ունեցած ընդհարման ժամանակ ընկել էր Սիսիանի սիրելին՝ Ստեփան Ստեփանյանը իր ընկերներով: Այս դեպքը հայաբնակ շրջաններում մեծ հուզմունք էր առաջ բերել:

Եվ ահա այս հուզումների տպավորության տակ Տաթևի շրջանի հայերը դեկտեմբերի 29-ին հարձակում գործեցին Յայջի գյուղի մոտ գտնվող Քյուրդլար թուրքաբնակ գյուղի վրա: Թուրքերը մի կարճ դիմադրությունից հետո փախան՝ տալով բավականաչափ զոհեր: Գյուղը ենթարկվեց կողոպուտի և ապա հրդեհվեց, որը մինչև այժմ էլ ավերակ է:

Այս շրջանում թուրքական մի հարձակում տեղի ունեցավ նաև հուլիս ամսին: Այս հարձակման մեջ էլ դեկավարողի դեր ստանձնել էին Աղվանի և Տանձավեր գյուղերը: Հարձակումը ուղղված էր Տանձատափի Մալղաշ կոչված բինաների վրա, որտեղից թուրքերը քշեցին 100 գլխից ավելի ոչխար և հրդեհեցին բինաները: Այս դեպքից հետո Դափանի ճանապարհը, որով նոր-նոր հայերը սկսել էին երթևեկել, նորից փակվեց և տանձատափեցիների համար ստեղծվեց մի ծանր դրություն: Նրանք անկարող էին դուրս գալ դեպի արոտատեղիները և իրենց հանդերը:

Այս դրությունը ստիպեց հայերին պատրաստվել և օգոստոսի 8-ին հարձակվել նախ Աղվանիի և ապա Տանձավերի վրա: Թուրքերը մի կարճ դիմադրությունից հետո փախան, կովի տեղում

Թողնելով 9 դիակ, որից հետո երկու գյուղերն էլ ավերվեցին և հրդեհվեցին:

Տանձավերը ավերվելուց հետո, Ղափանի ճանապարհը բացվեց, երթևեկությունը սկսվեց, բայց մանր-մունր հարձակումներն, այնուամենայնիվ, շղաղարեցին: Օգոստոսի 20—25-ին նույն Մալդաշի բինաների մոտից թուրքերը քշեցին տաթևցիների մի քանի տավար:

(Հունիս—դեկտեմբեր 1905 թ.)

Սիսիանը ընկած է Զանգեզուրի գավառի հյուսիս արևմտյան մասում, Որոտան գետի բազմաճյուղ ակունքների և նրա վերին հոսանքի վրա, մի լեռնոտ, խորդուբորդ արտաքինով, որը թեև զուրկ է անտառներից, սակայն հարուստ ջրերով և սիրուն հովիտներով, ներկայացնում է հացահատիկների մշակության համար արդյունավետ մի վայր:

Ամբողջ Սիսիանում կան 20 հայաբնակ գյուղեր, որոնցից բուն Սիսիանում գտնվում են 11-ը: Սրանցից 5-ը, այն է՝ Ղալաջուղը, Անգեղակոթը, Շաղաթը, Մազրան (Բարձրավան, Մուցք—խմբ.) և Բալաքը ընկած են Որոտանի վերին խառնվածքների վրա, իսկ առանձնապես Ղալաջուղը ընկած է հեռու, վտանգավոր մի տեղում:

(Ծանոթություն.— Այս գյուղը հիմնել են 1828 թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից գաղթած հայերը, որոնք Ղարաքիլիսա գյուղից (այժմյան շրջկենտրոնից), գաղթից մի քանի տարի անց, տեղափոխվել են այդտեղ: Այդ պատճառով էլ Ղալաջուղը կոչվում էր նաև Ղարաքիլիսա—2: Իսկ գյուղի անունը կապվում է մոտակա Բերդիկ—Ղալաջուղ—Մալիքլար—Սպանդարյան գյուղի հետ: 1920 թ. հետո Ղալաջուղ գյուղի բնակիչները հիմնեցին Սառնակունք (Սալբալու) գյուղը, իսկ մի մասն էլ բնակություն հաստատեցին Բորիսովկա գյուղում— խմբ.):

Մնացյալ գյուղերը, այն է Ղարաքիլիսան (Սիսիանի շրջկենտրոնը— խմբ.), Ուղը, Տոլորսը, Բռնակոթը, Ալիլուն (Սալվարդը— խմբ.), Աղքենդը (Աշոտավանը— խմբ.), Թազաքենդը (Թասիկը— խմբ.), Բնունիսը և Ախլաթյանը ընկած են Որոտանի մի փոքր ստորին հոսանքի և նրա երկու ճյուղերի՝ Սիսիան և Այրի գետերի հովիտների վրա:

Սիսիանի մնացյալ վեց գյուղերը՝ Շենաթաղը, Լորը, Գետաթաղը, Դարաբասը (Դարբասը— խմբ.), Լծենը և Շամբը մի շար-

քով ընկած են Բուն-Սիսիանից դեպի արևելք, Դարաբաս ձորակի (Լորաձորի— խմբ.) մեջ, որը հյուսիսային ուղղությամբ խառնըվում է Որոտանի կիրճին:

Սիսիանը շուրս կողմից շրջապատված է բազմաթիվ մանր ու մեծ թուրքաբնակ գյուղերով, որոնց մեջ իրենց անհանգիստ բնավորությամբ աչքի են ընկնում՝ Շաղաթի մոտ Շուքարը, Թազաքենդի մոտ՝ Զոմարդլուն, Ախլաթյանի մոտ՝ Շխլարը, Ալիլուի մոտ՝ Սիսիանը*), Ուզի և Ղարաքիլիսայի մոտ՝ Աղուզին և Վաղուզին: Բացի այդ Սիսիանի լեռները (ամառային արոտները— խմբ.) ամառվա ամիսների ընթացքում բռնած են լինում ահագին թվով թափառական ցեղեր, որոնք տեղական թուրք տարրերի հետ միասին կազմում են մի վտանգավոր զանգված:

Ահա մոտավորապես այն պայմանները, որոնք լուսաբանում են Սիսիանում տեղի ունեցած խոշոր ընդհարումների հնարավորությունը:

Զանգեզուրի գավառում հայ-թուրքական ընդհարումը առաջինը արձագանք գտավ Սիսիանի շրջանում: Եվ դա այն պատճառով, որ նա սահմանակից էր Նախիջևանի գավառին, ուր մայիս ամսին մեծ շափերի հասան թուրքական գազանությունները: Եվ, իսկապես, առաջին ընդհարումը տեղի ունեցավ Նախիջևանի գավառի սահմանակից երկու գյուղերում և այդ այն ժամանակ, երբ այդ գավառի այս ու այն տեղում խռովությունները դեռևս շարունակվում էին:

Հունիսի 25-ին Արիքլու գյուղացի ավազակ Մուրթուզը իր խմբով հարձակվեց Շաղաթ գյուղի նախրի վրա և ուզեց քշել, բայց գյուղից, ինչպես և Մազրայից հասած օգնության շնորհիվ կարելի եղավ նախիրը ազատել: Ավազակ Մուրթուզին օգնության եկան Մալվարդ լեռնաշղթայի վրա չված էլիաթից Ուսուբլու, Ահմադյար, Քյարիմբեկլու և այլ ցեղեր, որոնց շնորհիվ կռիվն ավելի մեծ ծավալ ստացավ: Շուտով հայերին օգնության հասան նաև Ալիլու գյուղից և ուժեղ կռիվը շարունակվեց մինչև երեկո, որի ժամանակ հայերից վիրավորվեցին հինգ հոգի, իսկ թուրքերից սպանվեցին մոտ 10 հոգի: Չնայած սրան, թուրքերը, այնուամե-

*) Սիսիան անունը գավառամասից բացի իր վրա կրում է նաև մի թուրքաբնակ գյուղ: (Սա Իսրայել Օրու ծննդավայրն է, որի անունով կոչվեց շրջանը, իսկ գյուղը այժմ կոչվում է Հացավան— խմբ.):

նայնիւ կարողացան տանել Մազրայից 90 դոմեշ և Շաղաթից երկու հարյուրի շափ գառներ: Հայերը հարձակվեցին և ավերեցին Ուսուբլուի օբան: Ահա այդ ժամանակ Գյումուրից (Նախիջևանի կողմից — խմբ.) եկավ մի հարյուրակ կողակ և կոխվը դադարեց, թեև հայերն իրենց անասունները ետ ստանալ շկարողացան:

Այս ընդհարումից անցավ մոտ երկու ամիս, մինչև որ օգոստոսի 16-ին Ուշթափալարի մոտ (Եռաբլուր — խմբ.) Աղուզի և Վաղուզի գյուղերի սահմաններում թուրքերի ձեռքով սպանվեցին շորս հայ բեկերը՝ Սաֆրազբեկյանները և Մելիք-Թանգյանները: Ինչպես Գորիսի դեպքերի նկարագրութչան ժամանակ էլ տեսանք, այդ շորս բեկերի սպանութչունը մեծ հուզումներ առաջ բերեց ամբողջ Սիսիանում: Բեկերի սպանութչունից հետո, տեղի ունեցան Շուշիի և Գորիսի դեպքերը, որոնց մանրամասնութչունները ավելի գունավորված հասնում էին Սիսիան և մարդկանց մտքերը հուզում:

Ահա այս հուզումների ժամանակ, օգոստոսի 22-ին, Ուսուբլուի և Ահմադլուի օբաները սարից իջնելով, վրանները խփեցին Բոնակոթ գյուղի մոտ: Բոնակոթցիները նախօրոք իմացած լինելով, որ այդ օբաները իրենց հետ տանում են Դարալագյազի (Վայքի — խմբ.) Մարտիրոս գյուղից փախցրած ոչխարի հոտը, մոտեցան և գրավեցին ոչխարը, որը մյուս ոչխարներից միանգամայն տարբերվում էր իր տեսակով՝ պոշավոր դմակով: Ոչխարների գրավումը տեղի ունեցավ առանց որևէ միջադեպի: Կառավարութչան միջամտութչունը վերջացավ նրանով, որ Մարտիրոս գյուղից եկան մի քանի մարդիկ և ճանաչեցին իրենց ոչխարները: Այդ դեպքը թուրքերի մեջ նշմարվող շարժմանը ծավալ շտվեց: Նրանք շհամարձակվեցին հարձակումներ գործել, նկատելով հայերի մեջ դիմադրութչան համար բավականաչափ ուժ:

Այսպիսով մի առ ժամանակ ևս հնարավոր եղավ խաղաղութչունը այս շրջանում պահպանել, բայց ոչ ընդմիշտ: Թուրքերը ճանապարհներին կատարեցին մի շարք սպանութչուններ, որոնք առաջ բերին նոր հուզումներ: Անհատական սպանութչուններն ավելի ևս հաճախակի դարձան նոյեմբերի սկզբներին: Մի շաբաթվա մեջ Մալիքլար թուրք գյուղի սահմաններում սպանվեցին և անհետ կորան զալաջուղցի անասնապահներ, հովիվներ և բեռնակիրներ՝ թվով 6 հոգի:

Նույն ձևով վարվեցին նաև հայերը: Նոյեմբերի 22-ին անհայտացավ Արավուս (Արևիս — խմբ.) գյուղի սեյիդ Աղիդողալը: Այս դեպքը ամենից շատ հուզեց Սիսիան գյուղի թուրքերին, որոնք թեև գտնվում էին Աղքենդ, Ալիլու, Թազաքենդ, Տուրուս գյուղերի մեջտեղում, այնուամենայնիվ փորձեցին սեյիդի վրեժը լուծել: Սեյիդի անհայտացման հաջորդ օրը, Սիսիան գյուղի դիմաց երկու թազաքենդցի բեռնակիրներ թուրքերի կողմից հարձակման ենթարկվեցին: Սրանք բեռները թողնելով հազիվ կարողացան փախչել, աղատվել: Հարձակվողները շքավահանացան դրանով, ընկան փախչող հայերի ետևից մինչև Թազաքենդի մոտ: Սիսիան գյուղից սկսեց խուժումը դեպի այդ գյուղը: Սիսիանը, սլետք է սասած, բավական մեծ գյուղ է, մոտ 200 տուն բնակիչներով և հայտնի է որպես անհանդիստ վայր: Ահա այդ անհանդիստ թուրքերով պաշարվեց Թազաքենդը երկու կողմերից: Գյուղի ծայրում հրդեհվեցին մի քանի դեղեր, հրացանների որոտը սարսափ տարածեց գյուղի վրա: Կին ու երեխաներ մի անօրինակ վայնասունով, ոտաբոբիկ, զլխաբաց սկսեցին փախչել դեպի Ալիլու գյուղը, բայց տղամարդիկ մնացին և կարողացան գյուղն աղատել ավերումից:

Սիսիանը, սակայն, դրանով չհանգստացավ: Հայերի վայնասունը և Ալիլու փախչելը խրախուսեց նրանց: Երեք օր անց, նոյեմբերի 26-ին, Թազաքենդը նորից ենթարկվեց հարձակման: Այս հարձակումը ծրագրված էր Զոմարդու (այս գյուղից են Հեյդար Ալիևի ծնողները: Այդտեղ է ծնվել նրանց ավագ որդի Հասանը: Տես՝ ԱԽՀ (ACE) հատ. 4, էջ 178 — խմբ.) և մի քանի այլ գյուղերի մասնակցությամբ՝ թեև շիրականացավ: Թազաքենդցին կռահելով հարձակումը, նախօրոք կին ու երեխաներին տեղափոխելով Ալիլու, մյուս գյուղերից օգնություն խնդրեց, որի շնորհիվ նա այս անգամ հակահարձակում գործեց: Թուրքերը փախան կորուստներով, 8 հոգի նրանցից ընկան միայն մի դիրքում, որ գրաված ունեին նրանք Ալիլուի ճանապարհի մի քարափի մոտ: Ապա հայերը սիրտ առած այդ հաջողությունից, գնացին Սիսիանի վրա:

Թուրքերը ուժեղ դիմադրություն ցույց տվին, բայց շուտով բավական զոհեր տալով քաշվեցին գյուղի կենտրոնում ցցված

բլրի վրա, մի հինավուրդ բերդի մնացորդների մեջ*), որից հետո
դյուղում սկսվեց կողոպուտն ու ավերը: Հայերը ետ շմնացին
թուրքերից, նրանք հրդեհեցին 50-ի շափ տներ, քշեցին 600—700
տավար ու ոչխար և շարունակում էին կողոպուտը, երբ վրա հա-
սավ զորքը և գնդակների ուժով մաքրեց գյուղը կողոպտող հա-
յերից:

Սիսիանի, այդ անհանգիստ գյուղի կորուստը շատ մեծ էր: Բացի նյութական վնասներից, նա ունեցել էր 50-ից ավելի սպան-
վածներ և վիրավորներ: Զոհեր տվեցին նաև հայերը: Գլխավո-
րապես կողակների գնդակներից ընկել էին Թաղաքենդից՝ Ավո
Կոստանյանը (30 տարեկան), Ալիլու գյուղից՝ Արշակ Գալստյանը
(25 տ.), Եսայի Պողոսյանը (25 տ.), Գրիգոր Գրիգորյանը (38 տ.),
Մովսես Հակոբյանը (25 տ.), Լևոն Սահակյանը (25 տ.), Մազրա
գյուղից՝ Գևորգ անունով (26 տ.) մի երիտասարդ: Բռնակոթ գյու-
ղից՝ Գաբրիել Մելիք-Թանգյանը՝ 45 տարեկան, և մի երկու էլ
մեզ անհայտ անուններ:

Ահա այս խոշոր ընդհարումից հետո շրջանը մի առ ժամանակ
խաղաղվեց, բայց ոչ երկարատև: Սիսիանի ճանապարհը դեպի
Գորիս ձգվում է Աղուղի և Վաղուղի գյուղերի վրայով: Հասկանալի
է, թե այդ երկու անհանգիստ գյուղերի մոտով ներկա պայմաննե-
րում ինչ կնշանակեր ճանապարհորդել: Այդ ճանապարհի վրա
անմեղ հայ ճանապարհորդներ շատ են սպանվել, բայց կատար-
վում էին նաև հանդուգն սպանություններ, ձեզ օրինակ՝ շորս հայ
բեկերի սպանությունը, որոնց ուղեկցում էին նույնիսկ երկու
ստրաժնիկներ: Դրանից ավելի հանդուգն մի սպանություն էլ տեղի
ունեցավ դեկտեմբերի 23-ին: Գորիսեցի մի սալապանի, որը եր-
կու կողակների ուղեկցությամբ զորքի համար մթերք էր տեղա-
փոխում, թուրքերը խլեցին կողակների ձեռքից և սպանեցին:

Այս և սրա նման մի քանի սպանություններ այդ ճանապարհը
հայերի համար դարձրին միանգամայն անանցանելի: Քսան գյու-
ղերի մի ամբողջ ժողովուրդ ստիպված էր ճանապարհը ծռել,
բարձրանալ սարերի վրա, մտնել ձորերի հատակը, իջնել Որոտան
գետի խորխորատները, մազլցեց այդ աղմկող, որոտացող գետի

*) Տեղացիները այդ բերդի պատմությունը կապում են Սյունյաց Վասակ
իշխանի հետ: (Իրականում դա Սյունիքի հինավուրց բերդերից է և կոչվում է
Վասակաբերդ— խմբ.):

անմատչելի կողերն ու ժայռերը՝ Գորիս երթևեկելու համար: Այն վտանգների հետ կապված մի ճանապարհ էր, ուր մի փոքր անգղույշ քայլը խորխորատ կտաներ քեզ էլ, ձիուդ էլ: Այդպիսի ճանապարհը կհամաձայներ անցնել խեղդված, նեղն ընկած ժողովուրդը միայն: Պահը և դիրքը հաճախ մարդուն ձգում են ծայրահեղությունների մեջ և ընդունակ դարձնում հանցավոր գործողությունների: Այսպես էր ներկա պահը: «Հարկավոր է Աղուղին և Վաղուղին՝ այդ երկու անհանդիստ գյուղերը մեջտեղից վերացնել, որ կարելի լինի երթևեկել ուղիղ ճանապարհով», — ահա այդ հանդուգն ծրագիրը, որ դրված էր մեջտեղ:

Դեկտեմբերի 25-ին զինված հայերի մի մեծ խումբ հարձակում գործեց Աղուղի գյուղի վրա: Թուրքերը կարճ դիմադրությունից հետո, բայց մեծ զոհեր տալով, փախան Վաղուղի, մի մասն էլ փակվեց մզկիթում: Հարձակվողների մի մասը մնաց գյուղից դուրս դիրքերի վրա, իսկ մյուս մասը խուժեց գյուղը և սկսեց հրդեհել և ավերել տները: Այդ ժամանակ Շաքի գյուղի թուրքերը օղնության հասան, և կովի ընթացքը փոխվեց: Օղնության եկան նաև մյուս գյուղերից, ինչպես և Դարաբասից: Գյուղից դուրս դիրքերում մնացածներն ընկան խաշաձև կրակի տակ: Տեղի ունեցավ մի համառ ու երկարատև կռիվ, որը վերջացավ հայերի նահանջով: Այդ ընդհարման ժամանակ թուրքերն ունեցան բազմաթիվ սպանվածներ, մինչև 60 հոգի, շատերի վկայությամբ՝ նույնիսկ ավելի, իսկ հայերը՝ 22 հոգի: Այդտեղ ընկան Սիսիանի սիրելի Ստեփան Ստեփանյանը, ալեքսանդրապոլցի Վահագն Պարունակյանը, բուլանրդցի Զաքոն, մշեցիներ Հարութը և Հակոբը, դարաքիլիսեցի Բաբադյուլ Խլաթյանը, բռնակոթցիներ Թանդի-բեկ Մելիք-Թանդյանը, Մկրտիչ Մակարյանը, Մանուշարյանը, Արշակը, Աբրահամյանը, ուղեցի Սարգիս Դանիելյանը, քարահունջեցի Արսեն Գևորգյանը, շինուհայրցի Խաչոն, ալիզուլեցի Սարգիսը և այլն:

Ահա այսպես էր այդ ծրագրի վախճանը, որը Սիսիանի հայերի վրա թողեց մի ճնշող տպավորություն, իսկ թուրքերի վրա՝ մի խրախուսիչ ազդեցություն, որը և առիթ դարձավ Դարաբասի սոսկալի ողբերգությանը, ինչպես այդ կտեսնենք մի փոքր հետո:

(25—27 դեկտեմբերի 1905 թ.)

Ինչպես վերը տեսանք, Դարաբասի (Լորաձորի— խմբ.) ձորակում մի շարքով ընկած են Շենաթաղ, Լոր, Գետաթաղ, Դարաբաս (Դարբաս— խմբ.), Լծեն և Շամբ հայաբնակ գյուղերը: Տեսանք և այն, որ այդ ձորակը գնում միանում է Որոտանի ձորակին: Ահա այդ խառնվածքի մոտակայքում ընկած են Աղուղին, Վաղուղին, Ինչպես և Որոտ, Իրիմիս, Բահարլու թուրք գյուղերը: Բացի այդ հիշյալ վեց հայ գյուղերից երկուսը՝ Շամբը, ընկած թուրք գյուղերի սահմանների մոտ, և Դարաբասը թուրքախառն են: Առաջինը նոր հիմնած գյուղ է, 35 տուն հայ և 20 տուն թուրք բնակիչներով, իսկ երկրորդը բավական մեծ գյուղ է, 115 տուն թուրք և ընդամենը 36 տուն հայ բնակիչներով:

Դարաբասը ընկած է Եղիակ և Ջիվիր-դաշ գագաթների սիրուն հատակում: Հին հայկական գյուղ է, որն ունեցել է 700 տուն բնակիչ, յոթ եկեղեցի, որոնց ավերակները մինչև այժմ էլ կան: Մեկը, գյուղացիների վկայությամբ, թուրքերի այժմյան մզկիթն է, վերանորոգված թուրքերի ձեռքով: Դարաբասի թուրքերը, դարձյալ գյուղացիների պատմելով, կրոնափոխ եղած հայեր են: Սրան որպես ապացույց բերում են այն, որ շատ հայ և թուրք ընտանիքներ մինչև այժմ էլ միմյանց «ամօղլի» (հորեղբորորդի) են անվանում:

Մանրություն.— ՀՀ ԳԱ թղթակից-անդամ, պատմաբան, հնեաբան Մորուս Հասրաթյանը մշտապես հայտնում էր այն վարկածը, ըստ որի Սիսիանի Որոտն (Որոտան) և Դարբաս գյուղերի հայ բնակիչները մուսուլմանություն են ընդունել Օրբելյանների իշխանության վերջին տարիներին (1400—1430 թթ.), որպեսզի թաթար-մոնղոլական տիրապետության այդ շրջանում պահպանեն իրենց գերակշիռ դիրքը Սյունիքում: Որոտն գյուղի թուրքերը մինչև վերջ էլ պահպանել էին թաղման և կեցադաշին մի շարք քրիստոնեական ծեսեր, բնակիչների մարդաբա-

նական կառուցվածքը բուրբուխին նման չէր թուրք-թաթարական ցեղերին: Ուշա-
դրով է նաև այն հանգամանքը, որ այդ երկու գյուղերում չի պահպանվել քրիս-
տոնեական և ոչ մի հուշարձան, մինչդեռ բուն թուրքական գյուղերում դրանք չեն
ավերվել— խմբ.):

Անշուշտ այս հանգամանքը նպաստել է այնքան մոտ բարե-
կամական հարաբերություններին, որ գոյություն ունեին այդ գյու-
ղի հայ և թուրք ժողովուրդների միջև նախքան ընդհարումները,
թեև անտես առնել և այն հանգամանքը, որ հայերը, ինչպես ամեն
տեղ, նույնպես էլ այստեղ եղել են համբերող կողմը և շատ ճրն-
շումներ տարել են որպես ավանդական մի դառն ճակատագիր:

Գալիս է հայ թուրքական ընդհարումը, մտքերը պղտորվում
են, անպատիժ կողոպուտը թունավորում է նաև Դարաբասի «ա-
մօղլիներին», և կամաց-կամաց նրանց մեջ նկատվում են կաս-
կածելի շարժումներ:

Տեղի են ունենում Մազրայի ընդհարումները, շորս բեկերի
սպանությունը, Գորիսի և Շուշիի դեպքերը, Մինքենդի կոտորա-
ծը: Տեղի է ունենում Սիսիանի ավերը: Այս բոլորը հուզում են
Դարաբասի թուրքերին, մանավանդ՝ նրանց ջահելներին:

Այսպիսի տրամադրություն մեջ, հոկտեմբերի 17-ին, թուրքե-
րը հարձակվում և քշում են Շենաթաղ գյուղի տավարը և սպա-
նում Ալեքսան Եղյանին, 25 տարեկան: Նոյեմբերի վերջերին Գո-
րիսի ճանապարհին, Յոթն-աղբյուր կոչված տեղում սպանվում
են Միքայել Սարգսյանը, 25 տ. և Հովսեփ Գրիգորյանը, 30 տ.,
որոնց սպանության կասկածն ընկնում է Դարաբասի թուրքերի
վրա: Այս ավելի է լարում դրությունը: Դարաբասի թուրքերից
20—30 ընտանիքներ քոչում-գնում են գյուղից, իսկ Շամբի հա-
յերը, որոնք այդտեղ էին դադթել Դարաբասից, գալիս տեղավոր-
վում են թուրքերի դատարկ մնացած տներում:

Դարաբասի հայերը, նկատելով վտանգավոր դրությունը,
ստիպված են լինում դիմել այս և այն տեղ, զենք ձեռք բերել,
կապեր հաստատել մյուս հայ գյուղերի հետ՝ ընդհարման դեպ-
քում օգնություն ստանալու հույսով: Այս երևույթն էլ կասկածներ
և հուզումներ է ծնում թուրքերի մեջ:

Ահա այս խառնափնթոր վիճակում տեղի է ունենում Աղուզի
գյուղի պաշարումը: Ստեփանյանի և իր 21 ընկերների սպանու-
թյան լուրը կայծակի արագությամբ տարածվում է ամբողջ Սի-

սիանում: Թուրքերը միանգամից սիրտ են առնում և սպառնական դիրք բռնում: Այս նույնը տեղի է ունենում նաև Դարաբասում, երբ Ադուղիից վերադառնում են օգնության գնացած թուրքերը:

Հայերը նկատելով սպասվող փոթորիկը, դիմում են թուրքերի առաջավոր մարդկանց խորհրդակցությանը և աջակցությանը: Գեկտեմբերի 25-ին Ալաբաբար-բեկի տանը տեղի է ունենում ժողով: Այդտեղ հայերի կողմից գնում են գյուղի քահանան՝ Տեր-Մկրտիչը և հասակավոր հինգ գյուղացիներ: Երբ սրանք ներս են մտնում ժողովատեղին, սարսուռ է պատում նրանց: Հավաքված են լինում ավելի քան 30—40 թուրքեր, մեծ մասամբ զինված և կասկածավոր հայացքներով: Քահանային, որպես թուրքերից էլ հարգված մարդու, նստեցնում են բոլորից բարձր, իսկ մյուսները նստում են դռան մոտ: Խոսակցությունը սլտտվում է օրվա հարցի շուրջը: Հայերն առաջարկում են թուրքերին տեղափոխվել Շամբ, իսկ Շամբի հայերին տեղափոխել Դարաբաս: Բայց թուրքերը այս անգամ խոսում են այլ լեզվով: Դրած խնդրից խուսափելով, սկսում են հայերին հանդիմանել, մանավանդ նրանցից մեկը՝ Քյալբալայի Ալփանանը, որը սպառնալիքներով հայտնում է, թե ջահելներին այլևս զսպել հնարավոր չէ, երաշխավորելը դժվար է և այլն:

Ահա այս խոսակցության միջոցին, գյուղի միջից լսվում է հրացանի մի պայթյուն, ապա երկրորդը, երրորդը: Ժողովի մեջ իրարանցում է ընկնում: Դռան մոտ նստած հինգ հայերը վայրկյանապես դուրս են պրծնում, փախչում, իսկ քահանան այդտեղ սպանվում է:

Իսկ ժողովի ժամանակ գյուղի մեջ կատարվել էր հետևյալը: Նախ պետք է ասել, որ գյուղը բաղկացած է երեք մասից, որոնցից հարավային և հյուսիսային մասերում ապրում են թուրքերը, կենտրոնում՝ հայերը: Երկու ճամփորդ հայեր, որոնք զինված անցնում էին թուրքական հարավային մասով դեպի Գետաթաղ, թուրքերը հարձակվում են նրանց վրա՝ զինաթափ անելու նպատակով: Այդպես ծագում է կռիվ և հրացանաձգություն, որի ժամանակ սպանվում են երկու թուրքեր:

Այդ հրացանաձգության ձայնը լսելով, թուրքերի մյուս մասում, մի թուրք ատրճանակի մի քանի կրակոցով միմյանց ետևից

սպանեց Շամբից գաղթած Մկրտիչ Խաչատրյանին, Մանուշակ Գրիգորյանին, 35 տ. և հինգ տարեկան որբ աղջկա՝ Սապի Գրիգորյանին: Ահա այստեղից էլ սկսեց ընդհարումը: Թուրքերն անհամեմատ շատ լինելով, զնդակների տարափի տակ հայերին քշեցին լցրին տների մեջ, որի ժամանակ սպանվեցին նորից շորս հոգի, այն է՝ 80 տարեկան Գրիգոր Ասովածատրյանը, 70 տարեկան կույր պառավ Հոռոմ Սարգսյանը, կաթվածահար 70 տարեկան Աննման Գևորգյանը և 18 տարեկան Արշակ Միքայելյանը:

Եվ ահա հայերի այդ նեղ բոպեին, մոտակա գյուղերից հասան օգնական ուժեր և գյուղի ծայրից սկսեցին հրդեհել թուրքերի տները և սպանել պատահածին: Այս անգամ էլ թուրքերը նեղ դրուժյան մեջ ընկան: Նրանց մի մասը փախավ սարերն ու ձորերը, իսկ մնացյալ մասը քաշվեց և պատսպարվեց երեք մեծ, այն է՝ մոլլա Աբիլ-Հասանի և Ալաքպար-բեկի (որի մոտ տեղի ունեւ ժողովը) տների մեջ՝ հարավային մասում և Աբաս Ալաքպար օղլու տան մեջ՝ հյուսիսային մասում:

Տներում թաքնված հայերը օգնության եկողների աղաղակն առնելով, դուրս թափվեցին փողոց դազան կտրած, հարձակվեցին թուրքերի տների վրա կողոպուտներով և հրդեհումներով: Հրդեհելով և ավերելով հասան մինչև այն տներին, ուր պատսպարվել էին թուրքերը մեծով, փոքրով, կանանցով և երեխաներով: Եվ ահա այդտեղ հայերը գործեցին ամենասոսկալին, հրդեհեցին այդ երեք տները մեջը եղած մարդկանցով:

Ոճիրը կատարվեց, հրդեհի մեջ և փլատակների տակ մնացին բազմաթիվ կենդանի էակներ: Մենք տեսանք այդ այրված տների մոխիրը, բայց ավելի շատ այն ոճրագործներին, որոնք ստեղծել էին այդ սոսկալի դժոխքը:

Մի օր անց Դարաբասին օգնության եկան Աղուղիի և Վաղուղիի թուրքերը: Այս անգամ էլ հայերը փախան և թուրքերը սկսեցին կողոպտել ու հրդեհել նրանց տները, մինչև որ նորից հայերն օգնություն ստանալով, ետ եկան և թուրքերը հավաքելով կենդանի մնացածներին, հեռացան:

Դարաբասի թուրքերի կորուստը սոսկալի էր, իսկ զոհերը ան-

հաշիվ: Սպանված, այրված և այս ու այնտեղ ընկածների թիվը հասնում էր 272-ի*):

Ահա այդ օրից Դարաբասը ներկայացնում է ավերակների մի կույտ, ուր տիրում է գերեզմանային մի ահավոր լուսթյուն:

Դարաբասի ձորակում այլևս խոշոր ընդհարումներ տեղի չունեցան, թեև թեթևակի դեպքեր, ինչպես էին հունիսի 10-ի հարձակումը Լծենի վրա, որի ժամանակ սպանվեց Նիկողոս Աղամյանը, 25 տ., և հուլիսի վերջում տեղի ունեցած հարձակումը Շենաթաղի վրա, որի ժամանակ թուրքերը քշեցին 20 տավար, դեռ շարունակվում էին:

Սակայն մենք անցնենք նորից Բուն-Սիսիան և տեսնենք ինչեր տեղի ունեցան այդ շրջանում Դարաբասի կոտորածից հետո:

*) Թե վարչակարգը որպիսի անտարբերությամբ էր վերաբերվում այս բուրիին, երևում է այն բանից, որ մի այսպիսի խոշոր արշտունալի ընդհարումը լուրջ քննության անգամ չէր արժանացել նրա կողմից: Ինչպես մեզ պատմեցին այդ գյուղում, մի անգամ ոստիկանությունը կազմել էր մի արձանագրություն և անցել գնացել:

(Հունվար — հուլիս 1906 թ.)

Ոչ Սիսիան գյուղի ավերը, ոչ Աղուղի գյուղի վրա տեղի ունեցած հարձակումը և ոչ էլ Դարաբասի կոտորածը Սիսիանին խաղաղություն չբերեցին: Ընդհակառակը թուրքերն ավելի ևս հուզվեցին: Նրանք ամեն կերպ մտածում էին և պատրաստվում վրեժխնդիր լինել՝ որքան կարելի էր մեծ թափով և որքան կարելի էր նշանակալից մի օր:

Եվ ահա ծրագրվեց մի մեծ կոտորած հունվարի 6-ին, հայերի համար այդ հանդիսավոր ժամին (Սուրբ ծննդի և Հայտնության օրը — խմբ.): Այդպիսի մի ծրագիր էր կազմված նաև Շուշիի գավառում, Ասկերանի շրջանի հայ գյուղերի նկատմամբ: Նույնը տեղի ուներ և այստեղ: Սակայն ինչպես այնտեղ, այնպես էլ այստեղ, այդ դիվային ծրագիրը օդը ցնդեց:

Հունվարի 6-ի առավոտյան, ճիշտ այն ժամին, երբ Անգեղակոթ գյուղի հայերը եկեղեցում կատարում էին ծննդյան հանդեսը, թուրքերի մի ահագին բազմություն, խմբված Աղուղի, Վաղուղի, Որոտ, Շաքի և այ գյուղերից, հարձակում գործեց գյուղի վրա՝ մի սոսկալի աղմուկով և հրացանաձգությամբ: Այդ հարձակմանը, ականատեսների վկայությամբ, մասնակցում էր ավելի քան 1000 մարդ: Առաջնորդում էր ոմն Շախսուվար-բեկ և մի մոլլա՝ ջահադ կանչելով: Արշավախմբին ուղեկցում էր նաև դափ ու դուռնան: Սակայն որքան ուժեղ էր հարձակումը, նույնքան ուժեղ կերպով տեղի ունեցավ դիմադրությունը:

Անգեղակոթում այդ ժամանակ գտնվում էր Սիսիանի սիրելի Քեռին: Ահա այդ փորձառու զինվորն առաջ անցավ, որին հետևեցին գյուղի շատ թե քիչ զենք գործածելու ընդունակ մարդիկ, և շնորհիվ առաջնորդի փորձառության, համեմատաբար քիչ թվով հայ դիմադրողներին հաջողվեց հարձակումը ետ մղել: Թուրքերը փա-

խուատի դիմեցին, թողնելով 8 դիակ Անգեղակոթի մոտ: Իսկ ավելի շատ թվով սպանվածներ և վիրավորներ հետները տարան: Հայերից սպանվեցին երկու կին, այն է՝ Բեկիխան Մկրտումյանը, 25 տ., Վարդիգյուլ Ալահվերդյանը, 40 տ., և Հովսեփ Հալանյանի 10 տարեկան տղան և 6 տարեկան աղջիկը:

Այս խոշոր հարձակումից հետո, առ ժամանակ շրջանը խաղաղվեց և նորից աղմկեց փետրվարին: Տեղի ունեցան նոր դեպքեր, որոնցից մենք կհիշենք մի քանիսը միայն:

Փետրվարի 2-ին, Ելիջա սարի Պատպատի կոչված տեղում շխլարցի թուրքերը երկու ճամփորդ հորսեցի (Վայքից — խմբ.) հայերի կենդանի բռնեցին և տարան: Նրանց հետ եղող մի բռնակոթցին կարողացավ փախչել և հավար տանել: Երբ Ախլաթյան գյուղի հայերը հավարի գնացին, Շխլարի թուրքերը նրանց հալածելով եկան պաշարեցին գյուղը: Սակայն Ախլաթյանի մոտ թուրքերը ետ մղվեցին, թողնելով հինգ դիակ: Հայերից սպանվեց Յախշի Եղյանը, 25 տարեկան:

Մայիսի 3-ին միաժամանակ հարձակում տեղի ունեցավ Ալիլու և Տոլորս գյուղերի վրա, բայց երկու հարձակումներն էլ ետ մղվեցին, առանց լուրջ վնասներ պատճառելու: Հուլիսի 2-ին հարձակման ենթարկվեց Թազաքենդը, որի ժամանակ թուրքերը քշեցին 18 գլուխ տավար:

Մի մեծ, կորստաբեր հարձակում, սակայն, պատրաստված էր Ղալաջուղ գյուղի համար:

Այս գյուղը իր հեռավորությամբ և լեռնականներին մոտ լինելու պատճառով այնքան զրկանքներ էր կրել և զոհեր տվել, որ դրանց թիվ ու հաշիվ չկար: Որոտան գետի ափունքների մոտ մի անգամ այդ գյուղից սպանվեցին 9 հոգի, բայց քանի-քանիսը սպանվեցին մեկով, երկուսով: Սակայն այդ բոլորը չնչին էին այն զրկանքների համեմատությամբ, որ նա կրեց վերջին անգամ:

Հուլիսի 5-ին Շախսևան և Ղարահինդիկու էլիաթից մի քանի թուրքեր եկան Ղալաջուղի արոտներից ոչխար գողանալու: Հայերին հաջողվեց դրանցից մեկին բռնել: Եվ ահա ահագին բազմություն լեռներից իջնելով, պաշարեց գյուղը: Բայց հայերը կարողացան շնորհիվ գյուղի հարմարավոր դիրքերի հարձակումը ետ մղել:

Չնայած դրան, հայերը նկատելով իրենց գյուղի վտանգավոր դիրքը, այդ դեպքի հաջորդ օրը պատրաստվեցին քոչելու: Բայց

գյուղից դեռ նոր դուրս եկած, նրանք պաշարվեցին թուրքերով և նորից ետ եկան գյուղ: Այս անգամ հարձակումը տեղի ունեցավ թե քոչվոր ցեղերի և թե Աղուղի և Վաղուղի գյուղերի կողմից միաժամանակ: Ղալաջուղը նեղ օղակի պես պաշարվեց շորս կողմից: Թեև փոքրաթիվ, բայց հերոսաբար կովոզ ինքնապաշտպանության խումբը գերագույն ճիգեր թափեց մինչև կարողացավ այդ օրը, թեև մեծ զոհերով, գյուղը խուժանից ազատել:

Այդ օրը հայերից սպանվեց 22 հոգի: Դրանք էին՝ Անգեղակոթ գյուղից՝ Առաքել Գրիգորյանը (25 տ.), Թորոս Հովհաննիսյանը (20 տ.), Շահնազար Հաբեթյանը (40 տ.), Հաքիմի տղա Արզումանը (30 տ.), Հարություն Կարապետյանը (30 տ.), Ղազար Աեվոնդյանը (35 տ.), Օզուլ Հայրապետյանը (23 տ.), Շաղաթ գյուղից՝ Հարություն Հովհաննիսյանը (40 տ.), Ստեփան Տեր-Կարապետյանը (18 տ.), նաև հինգ հոգի, որոնց անունները մեզ հայտնի չեղան, Բալաք գյուղից՝ Վարդան Բաբայանը (28 տ.), Զիլֆուղար Կարապետյանը (30 տ.), Ղարաքիլիսա գյուղից Մկրտիչ անունով մի երիտասարդ, Ղալաջուղ գյուղից՝ երկու տղամարդ, մի կին և երկու էլ օտարական:

Չնայած այն բանին, որ թուրքերը այդ օրը ետ քաշվեցին ավելի քան 30 զոհ տալով, բայցևայնպես նրանք հարձակվեցին նաև երրորդ օրը՝ ավելի մեծ բազմությամբ: Գյուղի դրությունը կրիտիկական դարձավ: Մի ճիգ ևս և ամեն բան վերջացած էր: Ահա այդ ժամանակ հասավ զորքը և ժողովրդին առած դուրս եկավ, որից հետո գյուղը ենթարկվեց խուժանի սոսկալի կամայականություններին: Քարը քարի վրա շմնաց, 60 տնից բաղկացած գյուղը ավերվեց, 60 ընտանիք մնաց բաց երկնքի տակ, տարագիր:

Ղալաջուղի ավերումից անմիջապես հետո հայերն էլ հարձակվեցին և ավերեցին շորս թուրքական գյուղեր՝ Փուլը, Արիքլուն, Շուքարը և Մալիքլարը, որտեղից ժողովուրդը փախավ մի քանի զոհեր տալով: Այդպիսով ավելի քան 150 ընտանիք էլ այստեղ մնաց բաց երկնքի տակ:

Սրանից հետո, հուլիսի 9-ին, Սիսիանի և Զոմարդլուի թուրքերը եկան նորից պաշարեցին Թաղաքենդը, սակայն վրա հասան կողակները և թուրքերից 8 հոգի սպանելով, ցրեցին նրանց: Իսկ հուլիսի 12-ին եկավ պատժողական գունդը և հիշյալ երկու թուրք գյուղերը ուժբակոծեց, որից հետո միայն շրջանը խաղաղվեց:

(Մանրորություն.— Ղալաջուղի կովում, իրոք, ամենահերոսական կողմերով իրենց դրսևորել են անգեղակոթցիները: Գյուղացիները այդ քաջորդիներին հողին էին հանձնել ոչ թե գյուղի գերեզմանատանը, այլ գյուղի հրապարակներից մեկում՝ հիմնելով իրենց զոհերի պանթեոնը: Ինչպես այդ կովում, այնպես էլ թաղման արարողությունների կազմակերպման գործում մեծ դեր էին խաղացել դաշնակցականները: Եվ քանի որ դաշնակցական զոհերի տապանաքարերի վրա գրել էին նաև նրանց կուսակցական պատկանելությունը, դժբախտաբար այս հանգամանքը առիթ էր դարձել, որպեսզի խորհրդային տարիներին այդ պանթեոնը ավերվեր: Տապանաքարերը շուտ էին տրվել կամ անհայտացել էին: 1980-ական թվականներին տողերիս հեղինակը վերականգնեց այդ պանթեոնը: Սրբատաշ պատշարվեց փողոցի կողմում, դերեզմանաքարերը կանգնեցվեցին: Սակայն վերոհիշյալ չոթ անգեղակոթցիների տապանաքարերից, ցավոք, մնացել էր միայն մեկը՝ որը Հաբիմի տղա Արզումանինն էր: Հողի մեջ թաղված երեսին տապանաքարը պահել էր հետևյալ արձանագրությունը. «Այս է տապանաքարը դաշնակցական հայդուկ Արզումանի, 1906 թ.»— ՇՁՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ):

Ղափանը զբաղեցնում է Զանգեզուրի գավառի հարավային ամբողջ կես մասը, ուր լեռնային կազմվածքը, շնորհիվ ճոխ բուսականության, հարուստ անտառների և բազմաթիվ մանր ու մեծ գետերի, այդ պատմական գավառին տալիս է մի դյուրթիչ տեսք, թեև այդ կողմերին հատուկ թանձր մշուշը հաճախ գալիս է հետաքրքիր աչքերից օրերով ծածկելու բնության այդ վարդը:

Ղափանի մակերևույթը ծածկված է անթիվ ձորերով և պատրվածքներով, որոնց միջով հոսում են Բարգուշատ, Աջանան, Օխշի, Բասուտ, Մեղրի և շատ այլ գետակներ, որոնք առատորեն ոռոգում են այդ բազմակերպ մակերևույթը:

Բացի այդ, Ղափանը հայտնի է իր պղնձահանքերով, որոնք թեև առայժմ շահագործման մեծ ասպարեզ չեն դարձել, բայց իրենց հարստությամբ մեծ ասպագա են խոստանում, մանավանդ երբ ճանապարհների կառուցման հետ այդտեղ մուտք կգործի հանքերը շահագործելու նորագույն տեխնիկան:

Ղափանի շրջանի հայաբնակ գյուղերը, ընկած գավառակի զանազան մասերում, ներկայացնում են վեց խմբակներ, որոնցից միայն երկուսը ազատ մնացին խոշոր զանգվածային ընդհարումներից:

Այդ վեց խմբակներն են.

1. Ագարակ — Ուժանիսի շրջան:
2. Աջանան գետի հովիտ:
3. Հանքերի շրջան կամ Անդրաջանան:
4. Օխշիի ձոր կամ Օխշի գետի հովիտ:
5. Բասուտ գետի հովիտ:
6. Մեղրի գետի հովիտ:

(Հունվար և օգոստոս 1906 թ.)

Բարգուշատ (Որոտան) գետի արևմտյան մի ճյուղի՝ Քյահրեզ գետի վերին հովիտների վրա ընկած են Ղափանի վեց հայաբնակ գյուղերը, այն է՝ Մողես (Կաղնուտ— խմբ.), Ուժանիս, Խըղըրանց, Եղվարդ, Ադարակ, Տանձաթափա: Իսկ այս վեց գյուղերից դեպի հյուսիս, Չայ-Չամին (Քաշունի— խմբ.) գետի վրա ընկած է Զեյվան (Դավիթ-բեկ— խմբ.):

Հայ գյուղերի այս խմբակի շուրջը բազմաթիվ թուրքաբնակ գյուղերի շարքում գտնվում են անհանգիստ Իսկանդարբեկուն, Ալադինը, Եմադլուն, Չարալուն, Փարիջանը, Սալդաշը և Ղուբաթլուն: Ղուբաթլու գյուղում ապրում է Իլդրիմ-բեկ Սուլթանովը, որին մենք պատահեցինք Գորիսի գեպքերի նկարագրության ժամանակ և որը ահագին վատ դեր խաղաց Զանգեզուրի ընդհարումների մեջ:

Ահա հայ գյուղերի այս շրջանում հունվարի սկզբին տեղի ունեցավ Ղափանի առաջին ընդհարումը:

Մինչ այդ Ղափանի ոչ մի մասում հայ-թուրքական ընդհարում չեղավ: Օգոստոսին և հետագա ամիսներին Բուն-Զանգեզուրում և Սիսիանում տեղի ունեցող գեպքերը արձագանք չգտան Պարսկաստանին սահմանակից այս շրջանում: Սակայն չպետք է կարծել, որ այդտեղ հուզումներ տեղի չունեին: Ընդհակառակը, Նախիջևանի գավառի ընդհարումների միջոցին Ղափանում լուրջ դրություն ստեղծվեց: Տեղացի և պարսկահայատակ թուրքերի շրջանում ակնհայտ դարձավ մի ինչ որ արտասովոր շարժում: Ճամփորդ հայերի նկատմամբ կատարվեցին կողոպուտի և սպանության գեպքեր, ճանապարհները դարձան վտանգավոր և անանցանելի: Մի պահ այնպիսի գրգռված դրություն առաջ եկավ, մանավանդ սահմանին մոտ շրջաններում, որ ժամ առ ժամ հարձակում էր սպասվում: Բայց հայ ժողովրդի ծայրահեղ համբերության շնորհիվ հնարավոր եղավ առ ժամանակ թուրք տարրերի մեջ նկատվող հուզմունքը մեղմել և ընդհարումները կասեցնել: Թեև հնարավոր չեղավ այդ դրությունը մինչև վերջ պահպանել:

Մի փոքրիկ առիթ և ահա ընդհարումը պայթեց:

Հունվարի 9-ին Եղվարդ գյուղի հանդում Սարալու, Խաչթափա գյուղերի մի քանի թուրքերի և եղվարդցի հայերի միջև կռիվ ծա-

զեց, որի ժամանակ թուրքերից երկուսը սպանվեցին: Այս դեպ-
քից գրգռված, թուրքերը նույն գիշերը հարձակվեցին Եղվարդի
բինաների վրա, քշեցին 150 գլուխ տավար, կողոպտեցին եղած-
չեղածը և ապա հրդեհեցին բինաներն ու խոտի դեզերը: Այդտեղ
եղած մարդիկ հազիվ կարողացան փախչել և ազատվել: Մրանով
չբավականացած, թուրքերը փորձեցին հարձակվել նաև գյուղի
վրա, բայց ետ մղվեցին, որի ժամանակ սպանվեց ավազակ
Խանքշին:

Հարձակումը կրկնվեց հունվարի 14-ին, բայց այս անգամ
ավելի մեծ ուժով և ուղղված Մողես գյուղի վրա: Փոքրիկ Մողեսը
անկարող եղավ դիմադրել ահագին խուժանին: Ժողովուրդը հա-
զիվ կարողացավ Արծվանիկ փախչելով ազատվել: Գյուղը են-
թարկվեց կողոպուտի: Թուրքերը տարան 400-ի շափ տավար ու
ոչխար և տնային բոլոր իրերը:

Մողեսը վիճելի գյուղ էր Խալիֆանով բեկերի և գանձարանի
(այսինքն պետական պատկանելության գյուղ կոչվելու — խմբ.)
միջև: 1902 թ. հայերի վկայության շնորհիվ, դատը վերջացավ
հօգուտ գանձարանի: Մողեսցիների այդ վարմունքն էլ եկան պատ-
ժելու բեկերը: Ահա այն ընդհանրացած կարծիքը, որ գոյություն
ունի Ղափանում Մողեսի ավերման նկատմամբ:

Մողեսի հարձակման ժամանակ սպանվեց ծերունի Օհանջան
Օհանջանյանը, իսկ Բարխուդարյանի և Գալստյանի ընտանիքնե-
րը հրդեհից հրաշքով ազատվեցին՝ Արծվանիկից հասնող օգնու-
թյան շնորհիվ: Թուրքերից սպանվեցին ավելի քան 10 հոգի:

Հունվարի 18—19-ին հարձակման ենթարկվեց Զեյվան: Ակա-
նատեսների վկայությամբ, ահագին խուժանին առաջնորդում էր
անձամբ ինքը՝ Իլդրիմ-բեկը: Երկու օր շարունակ կրկնվում էին
հարձակումները, բայց ապարդյուն: Քաջ Զեյվան կարողացավ հետ
մղել խուժանին, որն անկարող լինելով գյուղն ավերել, գնաց հր-
դեհեց բինաները:

Մի նոր հարձակում տեղի ունեցավ Եղվարդի վրա նաև հուն-
վարի 22-ին, բայց դարձյալ ապարդյուն: Թուրքերը փախան 22
զոհերով: Այս հարձակումով շրջանը մի առ ժամանակ խաղաղ-
վեց, մինչև եկավ օգոստոսը, այդ շարաբաստիկ ամիսը, երբ քոչ-
վորները շարժվեցին իրենց տեղերից: Պղնձահանքերի շրջանում
նախ տեղի ունեցան մի քանի սպանություններ և ապա խոշոր

դեպքեր՝ ինչպես այդ կտեսնենք քիչ հետո: Հանքերի շրջանի այդ դեպքերն էլ հենց արձագանք գտան շրջանում:

Օգոստոսի 10-ի լուսածագին թուրքերի մի ահագին խուժան հարձակվեց Տանձաթափայի վրա: Մինչև կեսօր դիմադրելով, հայերն անկարող եղան կանգնեցնել խուժումը: Ժողովուրդը հազիվ կարողացավ փախչել Ագարակ: Հարուստ Տանձաթափան բոլորովին կողոպտվեց և հրդեհվեց: Խուժանը տարավ 300 գլուխ տավար, հարյուրավոր բեռներով ցորեն, գարի և այլ տնային թանկարժեք իրեր: Ժողովուրդը փախավ բոլորովին պլոկված՝ 5 զոհերով և մի քանի վիրավորներով: Սպանվեցին՝ Մելիք-Քարամյանների տնից՝ Միքայել-բեկը (70 տ.), Բեզլար-բեկը (65 տ.), Բահրամ-բեկը (45 տ.), Բախշի-բեկի կինը (40 տ.) և Հաթամ-բեկի աղջիկը (19 տ.): Թուրքերը նույնպես զոհեր ունեցան, սակայն անհայտ թվով:

Այդ նույն օրը հայերն էլ հարձակվեցին և ավերեցին Եմազլու, Խաշտապ և Ալմալի թուրք գյուղերը:

Օգոստոսի 14-ին հարձակման ենթարկվեց Ուժանիսը, որը գտնվում է մի քանի թուրք գյուղերի սահմանի վրա: Հայերը ծանր դրության մեջ ընկան: Գյուղի ծայրում հրդեհվեցին 40-ից ավելի մարագներ: Եվ այն պահին, երբ հայերը հուսահատված պատրաստվում էին գյուղը թողնել խուժանին և փախչել, Ագարակից օգնության եկող հայերը հակառակ կողմից հարձակվեցին թուրքերի վրա և հալածեցին նրանց մի քանի զոհերով՝ թեև մինչ այդ նրանք արդեն տարել էին 60 տավար և 100-ի շափ այծ: Հայերից սպանվեցին Կոստան Աղասարյանը (60 տ.), Իսահակ Սահակյանը (17 տ.), 9 հոգի էլ վիրավորվեցին:

Ուժանիսի վրա նոր հարձակում տեղի ունեցավ օգոստոսի 22-ին: Այս անգամ հարձակմանը մասնակցում էին Պարսկաստանից եկած թուրքերը: Չնաած սրան, թուրքերը ուժեղ դիմադրության հանդիպելով ետ փախան՝ ճանապարհներին կոտրատելով պատահած ջրաղացների քարերը:

Ահա ընդհանուր գծերով այն ընդհարումները, որ տեղի ունեցան Ագարակ—Ուժանիսի շրջանում: Սակայն ավելի խոշոր և արյունալի ընդհարումներ տեղի ունեցան հանքերի շրջանում, որին և անցնում ենք:

(2—15 օգոստոսի 1906 թ.)

Ազարակ—Ուժանիսի գյուղախմբից դեպի արևմուտք, Աջանան գետի հովիտներում ընկած են Տորթնի (Անտառաշատ—խմբ.), Վերին և Ներքին Խոտանան, Շրվենանց, Խլաթաղ (Զորաստան—խմբ.), Առաջածոր, Նորաշեն (Նորաշենիկ—խմբ.), Կավարտ, Ըրկենանց, Սևաքար, Զափնի և Արծվանիկ հայ գյուղերը: Միմյանց մոտ ընկած այս գյուղերի շրջանում խոշոր զանգվածային ընդհարումներ տեղի չեն ունեցել, հետևապես նրանց վրա կանգ առնելն իմաստ չունի: Եվ եթե գյուղերի անունները նշեցինք, որպեսզի մի ամփոփ գաղափար տանք Ղափանի հայաբնակ գյուղերի և նրանց տեղագրության մասին:

Այս գյուղախմբից դեպի հարավ, Աջանան և Օխշի գետերի խառնվածքում, Անդրաջանանի շրջանում և Ուղուր-չայ գետի ձորերում գտնվում են Ղափանի պղնձահանքերը, գործարանները և Ուղուր-չայ բազարը (ավան, որ հետագայում անվանվեց Մարտունավան և այժմ մտնում է Կապան քաղաքի շրջագծի մեջ—խմբ.)՝ հայերի և թուրքերի մի քանի տասնյակ խանութներով:

Հանքերի շրջանում աշխատում են ավելի քան 1500 բանվորներ՝ կես մասը հայերից, իսկ կեսը՝ տեղացի և պարսկահպատակ թուրքերից:

Հանքերի շրջանում ընկած են վեց հայաբնակ գյուղեր: Այն է՝ Բարաբաթումը, Բեխը, Պղավերջ-Բաղաբուրջը (այժմ մտնում են Կապան քաղաքի շրջագծի մեջ—խմբ.), Վաչադանը, Գյուլագումը (Գեղանուշ—խմբ.), Ճակատենը և բազմաթիվ թուրք գյուղեր, որոնց թվում գտնվում են Ղաթարը՝ մի անհանգիստ մեծ գյուղ, Քյարիսանան, Գյոմարանը, Դարգուլուն, Աղքենդը և Ղարաչիմանը:

Հայ-թուրքական ընդհարումների ամբողջ մեկուկես տարվա ընթացքում անվերջ հուզումների և սարսափների տակ գտնվող այս

շրջանը թեև ազատ մնաց հարձակումներից, բայց վերջիվերջո ազմկեց և այն էլ հասարակ պատճառից, որն էլ առիթ դարձավ ընդհարումների բռնկման ամբողջ Ղափանում: Ճիշտ է, պատճառը չնշին էր, բայց այն առաջ եկավ դեպի իրենց ձմեռանոցները քոշվորների հետադարձ շարժումից:

Օգոստոսի 1-ին Բեխ գյուղի սարում թուրքերի ձեռքով սպանվեց մի ձիապան հայ, Ավագ Սարգսյան անունով: Դրանից մի օր անց, օգոստոսի 2-ին, Թայդաղ և Շիրվանլու քոշվորները Բարաբաթումի հողերով անցնելիս, իրենց նախիրներին խառնեցին այդ գյուղի հանդում եղած տավարը և ուզեցին քշել: Հայերը դուրս եկան կանգնեցնելու նախիրը, իսկ մինչ այդ արդեն ընդհարում էր տեղի ունեցել, որի ժամանակ Բարաբաթումի այգիներում սպանվեցին դարաշիմանցի անցորդ երկու կողմնակի թուրքեր: Ահա այդ սպանված թուրքերից մեկի հայրը՝ Ջամալ-բեկը, որդու սպանության լուրն առնելով, հավաքեց մի մեծ բազմություն և հարձակվեց Մելիք-Աղարյանի «Սյունիք» գործարանի վրա, ուր առաջին զոհը եղավ գործարանի մեխանիկ Մինաս Խոջամիրյանը: Այս տեսնելով, գործարանում մնացած յոթ հոգին պաշտպանվելով կարողացան մինչև երեկո կանգնեցնել խուժումը: Սակայն այդ յոթից սպանվեցին նաև 2-ը, իսկ մնացյալ հինգը, խիստ նեղն ընկած հազիվ կարողացան փախչել-ազատվել: Դրանից հետո էլ շրջանի ամենալավ գործարանը՝ «Սյունիքը», ավելի քան 150 հազար ուրբլու արժողությամբ կողոպտվեց և ապա հրդեհվեց: (Պետք է հաշվի առնել, որ դարասկզբին Հայաստանում եզր արժեր 10—15 ուրբլի, ոչխարը՝ 2—5, պանրի մոթալը՝ 4—6 ուրբլի: — Խմբ.):

Ահա այս դեպքը սարսափ տարածեց հանքերի ամբողջ շրջանի վրա: Հանքերը կանգնեցին, բանվորները փախան գյուղերը, շուկայում եղած թուրքերը նույնպես փախան, որոնց խանութները՝ մոտ 40 հատ, ավելի քան 30 հազար ուրբլու զանազան ապրանքներով, կողոպտվեցին հայերի ձեռքով:

Օգոստոսի 4-ին նորից վերսկսվեցին խուժումները և ընդհարումները: Վաչագան և Պղավերջ գյուղերին սահմանակից Քյարխանա (Ներքին Վաչագան — խմբ.) գյուղից այդ օրը կրակ բացեցին հայերի վրա: Հայերը մեծ խմբով հարձակվեցին և պաշարեցին Քյարխանան: Թուրքերը անկարող լինելով դիմադրել, փախուստի դիմեցին՝ բայց ահագին զոհեր տալով: Հայերը խու-

ժեցին գյուղ գաղանացած, որտեղ ընկան տասնյակներով տղա-
մարդ, կին և երեխա: Ժողովրդի մի մասը կոտորվեց, մյուս մասը
փախավ, իսկ գյուղը հրդեհվեց, որը մինչև այժմ ավերակ է:

Այնուհետև մի քանի օր շարունակ տեղի ունեցան երկու կող-
մերից փոխադարձ հարձակումներ, որի ընթացքում հայերը աստի-
ճանաբար օգնություն ստանալով շրջակա գյուղերից, հարձակվե-
ցին և ավերեցին մի շարք թուրքական գյուղեր, այն է՝ Զիբլուն,
Խալաջը, Գեշի-Շաբադինը, Ինջավարը և Զուլուն:

Սակայն ամենամեծ ընդհարումը այս շրջանում տեղի ունե-
ցավ Ղաթար (Կատար— խմբ.) գյուղի շուրջը:

Ղաթարը 70—80 տնից բաղկացած գյուղ է, ընկած Ղաթար
պղնձահանքի, Սայաղ-Դաշ լեռան կրծքին: Շրջակա թուրք գյուղե-
րից այստեղ խմբվեցին բավական կովոդ ուժեր: Խմբվեցին նաև
հանքերում բանող պարսկահայատակ մշակներ և քոչվոր թյարա-
քամաներ: Այդտեղ եկան նույնպես մի քանի հայտնի թուրքեր:
Այնպես որ հայտնի դարձավ Ղաթարի սպառնական դիրքը դեպի
հայ գյուղերը:

Օգոստոսի 7—8-ին Ղաթարը մի թեթև հարձակում դործեց
Բեխ գյուղի վրա, բայց շուտով ետ քաշվեց: Այդ դեպքից հետո
Աջանան գետի շրջանի, բայց Ղաթարի սահմանակից Կավարտ
մեծ գյուղը սարսափի տակ ընկավ: Նրան սպառնում էր մի մեծ և
ահավոր հարձակում: Այդ նպատակով հայերն իրենց ուժերը
կենտրոնացրին այդտեղ և մինչ Ղաթարը կիրագործեր իր մտա-
դրությունը, շուրս կողմից պաշարվեց զինված հայերով:

Օգոստոսի 12-ին տեղի ունեցավ Ղաթարի սոսկալի կռիվը,
որը տևեց մի ամբողջ օր և որի ժամանակ թուրքերի անօրինակ
դիմադրությունը, ասում են, զարմանք պատճառեց պաշարողնե-
րին: Մի ինչ որ անասնաբույժի ղեկավարությամբ, Ղաթարում
խմբված թուրքերը քաջության հրաշքներ գործեցին: Սակայն թափ-
վող զնդակներից ընկան բավականաչափ թուրքեր, ընկավ նաև
դիմադրությունը ղեկավարող անասնաբույժը: Հուսահատությունը
տիրեց գյուղին, և սկսվեց փախուստը զնդակների տարափի տակ,
դիակների վրայով: Հայերը ներս խուժեցին գյուղ և սկսեցին
ավերն ու հրդեհը: Ժողովրդի մի մասը կարողացավ փախչել, իսկ
մյուս մասը, բաղկացած զլխավորապես կանանցից և երեխանե-
րից, փակվեց մզկիթում և մի քանի մեծ տներում:

Ահա այդ ժամանակ, պատմում են, հարձակումը ղեկավարող-
ներից մեկը, Մուրադը, խստիվ պատվիրեց մոտ շքնալ մզկիթին,
չղիպչել կանանց, երեխաներին և պարսկահայատակ մշակներին,
նաև նրանց, ովքեր զենքը ցած կղնեին կամավոր: Եվ այդպես էլ
եղավ: Բազմաթիվ կանանց, երեխաների և պարսկահայատակ մշակ-
ների հայ երիտասարդները առաջնորդեցին դեպի թուրք գյուղերը:
Բայց կատարվածը կատարվել էր, հանցանքը հայինն էր, թուր-
քինն էր, թե երկրի կարգը պահպանող կառավարությանը, այդ
միևնույնն է: Ղաթարում ընկած զոհերի թիվը հասնում էր մի
քանի տասնյակի: Ամբողջ գյուղը ավերվել էր: Դեռ երեկվա շեն
Ղաթարը այլևս չկար:

Զոհեր տվին և հայերը և այն էլ շատ զոհեր, որոնցից միայն
յոթի անունները մենք կարողացանք ձեռք բերել: Դրանք էին՝ կա-
վարտեցի Մարգար Մակիյանը, առաջածորցիներ Անդրեաս Թու-
մանյանը (30 տ.), Խաչիկ Թումանյանը (32 տ.), շիկահողցիներ
Պապինը (28 տ.), Խունկիանոս Շաքարյանը (22 տ.), Նիկոլայ
Տեր-Մաթևոսյանը (20 տ.) և Պետրոս Պետրոսյանը (40 տ.):

Ահա այդպես շրջանը տակն ու վրա եղավ, գյուղեր ավերվե-
ցին, հազարավոր մարդիկ թշվառության մատնվեցին, հանքերում
կյանքը մեռավ, ճանապարհներն ավելի ևս անանցանելի դարձան:

(8—15 օգոստոսի 1906 թ.)

Հանքերի շրջանից դեպի արևմուտք, Օխշի (Ողջի— խմբ.) գետի վերին հովտում կամ Օխշիի ձորում ընկած են հինգ հայ գյուղեր, այն է Քաջարանցը, Հանդը (Ներքին— խմբ.) Քրդիկենցը (Լեռնաձոր— խմբ.), Մազրան և Փուրխուտը:

Այս հինգ գյուղերին շրջապատում են բազմաթիվ թուրք գյուղեր, որոնց թվում գտնվում են Օխշին, Շաբադինը, Փիրդավուդանը, Աթկըզը (այս գյուղերի մեծ մասը հետագայում մտան Քաջարան քաղաքի շրջագծի մեջ— խմբ.):

Շնորհիվ այն բանի, որ հիշյալ գյուղերը հեռու են ընկած թե հանքերի և թե Մեղրիի շրջաններից և շրջապատված են թուրք տարրերով, դեռ Նախիջևանի գավառի դեպքերի օրերից նրանք գտնվում էին ծանր կացության մեջ (պետք է հաշվի առնել, որ դարասկզբին Քաջարանի հատվածում հանքերը չէին շահագործվում և հայկական գյուղերը զբաղվում էին հիմնականում անասնապահությամբ— խմբ.):

Ճիշտ է, այդ շրջանը չէր փոթորկվում և խաղաղ էր, բայց դա շնորհիվ այն բանի, որ հայերը համբերությամբ տանում էին ամեն մի զրկանք, որը հաճախ արտահայտվում էր սպանություններով: Այսպես, հունվարի 18-ին Ղալարասի կոչված տեղում սպանվեցին քաջարանցի վարդան Հարությունյանը (40 տ.) և մազրեցի Խաչատուր Մկրտչյանը (45 տ.): Հուլիսի մեջ Բողաջղ գյուղի մոտ սպանվեցին Քրդիկենց (Լեռնաձոր— խմբ.) գյուղացի Պողոս Հարությունյանը (40 տ.) և մազրեցի Անտոն Հակոբյանը (45 տ.), իսկ Մուսալլամ գյուղի մոտ կենդանի գողացան դարձյալ Քրդիկենց գյուղացի Աբրահամ Համբարձումյանին: Ահա այս ձևի

պահպանված խաղաղությունը եկան խախտեալու հանքերի շրջանում տեղի ունեցող խոշոր դեպքերը:

Օգոստոսի սկզբին «Սյունիք» գործարանի հրդեհումից հետո, Օխշի գյուղը եկան մի քանի օտարական թուրքեր և սկսեցին տեղացիներին դրդուել հայերի դեմ: Այս բանը այնքան ակներև կերպով էր կատարվում, որ Օխշիի թուրքերը հայերին միամտացնելու համար կարենոր համարեցին դալ նրանց մոտ և հավատացնել, որ իրենք դեմ են ընդհարումներին և որ այդ օտարականներին փող տալով հեռացնելու են իրենց միջից: Մինչդեռ օգոստոսի 8-ին Քաջարանցը շորս կողմից պաշարվեց թուրքերով:

Հայերը երեք օր կարողացան դիմադրել խուժանին և թույլ չտվին նրանց խուժելու գյուղը: Սակայն թուրքերը քշեցին մոտ 100 տավար, 1300 ոչխար և մոտենալով գյուղի մի ծայրին՝ կողոպտեցին բավականաչափ տներ և հրդեհեցին մարագները:

Երեք օր գյուղը պաշարված մնալուց հետո, Մեղրիի և հանքերի կողմից օգնության հասան զինված տղաներ: Օգնության եկածները թեև շատ չէին, ընդամենը 20—25 հոգի, բայց նրանք անսպասելի կերպով թիկունքից հարձակվելով թուրքերի վրա, հալածեցին նրանց մեծ կորուստներով, որից տեղացի հայերը սիրտ առած խուժեցին հաջորդաբար Օխշի, Աթկըզ, Փիրդավուղան, Շաբաղին, Աջրլու և Բողաջղ թուրք գյուղերի վրա, որտեղից ժողովուրդը փախավ, ու գյուղերն ավերվեցին:

Հայերի համար այսպիսի նեղ պայմաններում այսքան թուրք գյուղերի ավերելը պիտի բացատրել թուրք ժողովրդի այն տարօրինակ հոգեբանությամբ, որ կովի և կողոպուտի այնքան հեշտությամբ աճապարող թուրք զանգվածը, նույնքան հեշտությամբ և ամբոխին հատուկ հետևողությամբ զլուխ է վերցնում ու փախչում, այլևս ետ չնայելով:

Չնայած այս բոլորին, Քաջարանց գյուղի դրությունը, որն ընկած էր Օխշի, Աթկըզ, Շաբաղին և Փիրդավուղան թուրք գյուղերի մեջտեղը, այնուամենայնիվ, վտանգավոր համարվեց: Այդտեղի բնակիչները օգոստոսին 11-ին ստիպված եղան քոչել Քրդիկենց և Հանդ գյուղերը: Թուրքերն առանց օր կորցնելու հարձակվեցին և տներն ավերեցին ու հրդեհեցին: Եվ ապա օգոստոսի 12-ին մեծ ուժով եկան պաշարեցին Քրդիկենցը, դաշտից քշելով 300-ի շափ

տավար և 500-ի շափ ոչխար: Կոիվը տևեց ամբողջ օրը, բայց հայերին հաջողվեց մի նոր և ուժեղ հակահարձակումով հալածել թուրքերին:

Ահա այս ժամանակ միայն զորքը եկավ և շրջանը խաղաղվեց:

Օխչիի ձորի ընդհարումներում թուրքերը հարյուրից ավելի զոհեր ունեցան: Զոհեր ունեցան նաև հայերը: Բացի վիրավորներից, Քաջարանց և Քրդիկենց դյուղերից սպանվել էին՝ Անտոն Մարտիրոսյանի կինը՝ Սապին (35 տ.), Թադևոս Զաքարյանը (28 տ.), Խոսրով Վարդանյանը (27 տ.), Օհանջան Դավթյանը (40 տ.), Աղաբեկ Մինասյանը (25 տ.), Թադևոս Մինասյանը (25 տ.), Ներսես Բաղդասարյանը (26 տ.), Ղուկաս Համբարձումյանը (45 տ.), Համբարձում Ղազարյանը (26 տ.) և Շահի Հովհաննիսյանը (26 տ.):

(6—15 օգոստոսի 1906 թ.)

Հանքերի շրջանից դեպի հարավ, Բասուտ գետի հովտում, ընկած են վեց հայաբնակ գյուղեր, դրանք են՝ Շիշկերտը, Կեմանցը, Ծավը, Հանդը, Շիկահողը և Սրաշենը: Այս խումբը նույնպես մեկուսացած է հայաբնակ վայրերից, նույնպես շրջապատված թուրք տարրերով: Այս շրջանի թուրքերը շատ մոտ հարաբերությունների մեջ են Պարսկաստանի հետ: Սրանց միջոցով և առաջնորդությամբ էին սահմանը անցնում պարսկահայատակ թուրքերը և հարձակումներ գործում հայ գյուղերի վրա, հասնելով մինչև Ուժանիս, Տաթև և նույնիսկ Սիսիան: Ուստի կարծում ենք բացատրելու կարիք չկա այն ծանր կացությունը, որի մեջ ապրում էր այդ փոքրիկ գյուղախումբը հայ-թուրքական ընդհարումներից ի վեր:

Մենք կանգ չենք առնի այդ շրջանում տեղի ունեցած մանրամունք դեպքերի վրա: Կանգ չենք առնի նաև փետրվարի սկզբում տեղի ունեցած հարձակման վրա, որի ժամանակ թուրքերը փախան մի քանի դիակ թողնելով, այլ կհիշատակենք միայն վերջին ընդհարումը:

Օգոստոսի 6-ին Զանգելանի և Ղարազյուլի (Սև լիճ, Սյունիքի բարձրավանդակում — խմբ.) թուրքերը, միացած սահմանից այս կողմ անցած պարսկահայատակ թուրքերին, մեծ ամբոխով եկան պաշարեցին Հանդը, Շիկահողը և Սրաշենը: Հայերը երկու օր շարունակ կարողացան ուժեղ դիմադրություն ցույց տալ և ի դերև հանել նրանց մտադրությունը: Թուրքերը նկատելով, որ երեք գյուղերը միաժամանակ ավերելը դժվար է, երրորդ օրը բոլոր ուժերը միասին հավաքելով պաշարեցին Հանդը: Այստեղից նրանք կարողացան քշել 60 տավար, մոտեցան գյուղի սահմաններին և հրդեհեցին մի քանի մարագներ: Ահա այդ նեղ պահին օգնության

եկավ երիտասարդների մի խումբ Կորյունի անաջնորդությամբ և ազատեց Հանդը անխուսափելի ավերումից:

Դրանից հետո, հայերը ի պատասխան թուրք խուժանի, իրենք էլ հարձակվեցին թուրք գյուղերի վրա, որտեղից ժողովրդին քշելով, ավերեցին Քյուլլու-Ղշլաղը, Մթնածորը և Սանալուն, որոնք մինչև այժմ անմարդաբնակ են:

Ղափանի այս սոսկալի տարեգրությունը ավարտելու համար, մեզ մնում է հիշել հայաբնակ գյուղերի վերջին խմբակը: Այդ Մեղրի գետի հովիտն է, ուր ընկած են՝ Կալեր, Վանք, Տաշտոն, Լիճք, Վահրավար, Կուտեմնիս, Կուրիս, Ագարակ, Մեղրի, իսկ դեպի արևելք՝ Մալև և Շվանիձոր գյուղերը:

(Ծանոթություն.— Հեղինակը այս գյուղերը մտցրել է Կապանի շրջանի մեջ, որովհետև այդ ժամանակ Մեղրիի շրջանի տարածքը ենթարկվել է Կապանի ոստիկանական շրջանին, մտնելով Զանգեզուրի գավառի մեջ: Մինչդեռ Մեղրին նույնիսկ Մեծ Հայքի ժամանակներից մտնում էր Սյունիք—Սիսական աշխարհի մեջ որպես առանձին գավառ՝ Արեիք անունով: Հայր Ալիշանը իր «Սիսական» (1893 թ.) կոթողային աշխատության Ժ գլուխը, որ նվիրված է հենց Արեիք գավառին, սկսում է հետևյալ գեղեցիկ տողերով. «Պայծառանուն գավառս Արեւեաց՝ համանման իմն քաղցր անուամբ հովիտ ունի գՄեղրի գետոյ փոքու...» («Սիսական», էջ 298):

Այս շրջանում զանգվածային ընդհարումներ տեղի չունեցան, բայց նրանց սարսափները մինչև վերջ շարունակվեցին: Ինչ վերաբերում է մասնակի դեպքերին, դրանց հաշիվ չկա: Մենք կհիշենք մեր իմացած մի քանի դեպքերը:

1905 թ. հուլիսին թուրքերը քշեցին Տաշտոն և Վահրավար գյուղերի 1000-ից ավելի ոչխարը և սպանեցին տաշտոնցի Առաքելին:

1906 թ. փետրվարին քշեցին Շվանիձորի տավարն ու ոչխարը:

1906 թ. ապրիլին Շվանիձորի մոտ թուրքերի ձեռքով սպանվեցին բեխեցի Դավիթ Մելիք-Փարսաղանյանը և շիշկերտցի Մարտիրոսը:

1906 թ. սեպտեմբերին թուրքերը սարից քշեցին Մեղրիի 80 տավարը, ապա Փուշկակ գյուղի 70 տավարը և թուրք Լեհվազ

գյուղի 30 ոչխարը: Լեհվազի թուրքերը Ալանգյոզի սարում հայերի հետ միասին կռվում էին թուրքերի դեմ:

Ինչպես տեսանք, Ղափանի շրջանում խոշոր ընդհարումներ և սոսկալի ավերումներ տեղի ունեցան օգոստոսի 2-ից մինչև 15-ը: Այժմ տեսնենք, թե ինչ էր անում այդ ժամանակ վարչակարգը: «Իրար ետևից հեռագրում էինք Շուշի՝ նահանգապետին և Գորիս՝ գավառապետին, որ գավառում ահագին ընդհարումներ կան, որ գյուղերը երկու կողմերից ավերվում, քանդվում են, որ հուզումները ծայրահեղ շափերի է հասել և տեղի են ունենում կոտորածներ, սակայն զորք չէր ուղարկվում, կարգադրութուն չէր արվում և ամբողջ շրջանը թողնված էր բախտի կամքին,— ահա այս էր պատմում մեզ խաղարար հանձնախմբի անդամ Ս. Մելիք-Ստեփանյանը^{*}), ցույց տալով մեզ այն մի շարք հեռագրերի պատճենները, որ ուղարկված էին նահանգապետին և գավառապետին:— Եվ զորքը եկավ այն ժամանակ, երբ ընդհարումները բավականաչափ հանդարտվել էին և պետք էր տուգանքներ գանձել»: Եվ իսկապես, ընդհարումներից հետո Ղափանում սկսվեց տուգանքների գանձումը:

15 հայ գյուղերից վերցրին 13 հազար ռուբլու շափ տուգանք, շխնայեցին նույնիսկ Օխշի գյուղի շորս հայ գյուղերին, որոնք ստիպված էին անհավասար կռիվ մղել շրջապատող տարրերի դեմ: Տուգանքներ վերցրին նաև թուրքերից, շատ տեղերում նույնիսկ 10-ական ռուբլի յուրաքանչյուր տնից:

Թշվառ ժողովուրդներ: Բավական չէ, որ անգիտացած միմյանց ավերում, քանդում էիք, միևնույն ժամանակ ավերվում, քանդվում էիք տուգանքների և էկզեկուցիաների շնորհիվ, որոնց ոչ շափն էր նախատեսվում և ոչ վախճանը:

Վերջացնելով Ջանգեղուրի գավառի այս արյունոտ տարեգրութունը, մենք կմեջբերենք մի հեղինակավոր կարծիք ևս, որը մեկ

^{*}) Մանորույրյուն.— Սմբատ Անդրեասի Մելիք-Ստեփանյանը ավարտել էր Ֆրայբերգի (Գերմանիա) լեոնային ակադեմիան, 1906—16 թթ. եղել է Կապանի լեոնարդյունաբերական ընկերության հանքերի տնօրեն: Խոշոր մասնագետ էր և մեծ բանական կարողութունների տեր, հայրենասեր և հասարակական գործիչ: Դժբախտաբար նրա կյանքի թեւը կտրվեց 1937 թվականին.— խմբ.):

անգամ ևս լույս կսփռի հայ-թուրքական ընդհարումների վրա՝ մասնավորապես Զանգեզուրում:

Զանգեզուրի 4-րդ մասի հաշտարար-միջնորդ պարոն Ֆոն Մենզենկամպֆը, Զանգեզուրում հայ-թուրքական ընդհարումների բռնկվելուց հետո, Գանձակի նահանգի գեներալ-նահանգապետին այդ ընդհարումների առիթով մի ընդարձակ և միևնույն ժամանակ շատ հետաքրքիր մի զեկուցագիրը ներկայացրեց, որից քաղվածորեն մենք կբերենք մի քանի հատվածներ: Ահա դրանք.

«1904 թ. սեպտեմբեր ամսից, երբ ես ստանձնեցի հաշտարար-միջնորդի պաշտոնը, — ասում է Ֆոն Մենզենկամպֆը զեկուցագրի մեջ, — առանց բացակայելու ապրելով ետ ընկած գյուղերի գյուղացիների մեջ՝ նախ 4-րդ և ապա 5-րդ ոստիկանական մասերում, Զանգեզուրում և Բարաբաթումում, ոչ մի անգամ անձամբ չնկատեցի և չլսեցի հայ և թուրք բնակիչների միջև անգամ որևէ ակնարկ ցեղային թշնամության մասին: Ընդհակառակը, նկատեցի մաքուր բարեկամական կապեր գյուղացիների մեջ, մինչև քավորությունը»:

Ապա իր ասածներին ապացույց բերելով մի քանի օրինակներ, նա ավելացնում է. «Հայերի դեմ ուղղված թուրքական շարժման հող կար, բայց այդ հողը պետք է փնտրել ոչ թե խաղաղ կուլտուրական և ինքնապաշտպանության ընդունակ հայ ժողովրդի մեջ, ոչ թե օրենքի առաջ հայ գյուղացու հետ միևնույն պայմանների մեջ եղող թուրք գյուղացիության մեջ, այլ թուրք առաջավոր դասի՝ բեկերի, սեյիդների և մոլլաների մեջ»:

Ապա բավական կանգ առնելով այն պայմանների վրա, որոնք զրգռեցին թուրք առաջավոր դասին կուլտուրայի ընդունակ հայ ժողովրդի դեմ, շարունակում է. «Ոչ պակաս դեր է խաղում այստեղ նաև տեղական վարչակազմի անտակտությունը՝ թուրքերին ցույց տված համակրանքով և, հետևապես, նրանց դեմ հենց սկզբից ձեռք առնելիք վճռական միջոցների բացակայությամբ, և, ընդհակառակը, իշխանության բացասական վերաբերմունքով դեպի հայերը»:

Եվ ապա առաջ բերելով մեղադրանքներ գավառապետ Ավալիանիի դեմ, անաշտո պաշտոնյան իր զեկուցագիրը վերջացնում է 14 հարցերից բաղկացած մի դիմումով: Ահա նրանցից երեքը.

«Ինչո՞ւ Գորիս քաղաքի աշքերի առջև 12 ժամ շարունակվող հրացանաձգությունը հայերի և թուրքերի մեջ,— բացականչում է ֆոն Մենդենկամպֆը,— անձամբ դուրս չեկավ դադարեցնելու գավառապետը կողակների հետ միասին: Մինչդեռ հենց այդ շարաբաստիկ հրացանաձգությանն է վերագրվում դավառի ամբողջ կոտորածը:

Ինչո՞ւ 2-րդ մասի պրիստավ նշանակվեց նախկին բանտարկյալ Սաղըդ-բեկ Մելիք-Ասլանովը:

Ինչո՞ւ այդ նույն Մելիք-Ասլանովը հակառակ մինքենդցիների խնդրանքի չհեռացվեց պաշտոնից մինչև կոտորածը: Մինչդեռ նա նույն իշխանության ձեռքով հեռացվեց միայն կոտորածից հետո»:

Ահա մեղադրական ակտերը պաշտոնական շրջաններից՝ պաշտոնական շրջանների դեմ:

Միթե այլևս որևէ կասկած կարող է լինել այն մասին, որ հայ-թուրքական կոտորածների մեջ կար մի խորհրդավոր ձեռք, որը նյութել էր այս դժոխքը:

Ա-Դոյի գրքի վերջում տրված են 1905—06 թթ. հայ թուրքական ընդհարումների ժամանակ Կովկասի հայկական բնակավայրերում զոհված հայերի ցուցակները: Այդտեղից նպատակահարմար գտանք քաղել և տպագրել միայն Զանգեզուրի հետ առնչվող ցուցակները, քանի որ գրքի շարադրանքի մեջ հիմնականում տրված են Զանգեզուրի մի շարք գյուղերում զոհվածների մասին տեղեկություններ:

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԲԱՔՎԻ 1905 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԻ ԺԱՄԱՆԱԿ

ՍՊԱՆՎԱԾ ԶԱՆԳԵԶՈՒՐՑԻՆԵՐԻ

Գ Ո Ր Ի Ս

Աբրահամյան Զհանգիր	Խնածախ
Առուստամյան Հովհաննես	Ալղուլի
Բաբայան Միրզաջան	Տաթև
Գևորգյան Սամսոն	Քարահունջ
Գրիգորյան Սահակ	Քարահունջ
Ծատուրյան Մանուչար	Խնձորեսկ
Ծատուրյան Բաղդասար	Խնձորեսկ
Ծատուրյան Գրիգոր	Խնձորեսկ
Կարապետյան Գրիգոր	Խնձորեսկ
Մկրտչյան Ներսես	Գորիս
Մկրտչյան Հովհաննես	Գորիս
Մկրտչյան Մարութ	Գորիս
Նասիրյան Գրիգոր	Քարահունջ

Առաքելյան Մկրտիչ
 Ավանյան Նիկողայ
 Բաղալյան Բեգլար
 Դանիելյան Մարտիրոս
 Թովմասյան Արշակ
 Մարուիթյան Գասպար
 Պետրոսյան Սամսոն
 Սահակյան Ղուկաս
 Սարգսյան Ռոստոմ
 Սարիյան Սիմոն
 Վարդանյան Համո
 Վարդանյան Մկրտիչ
 Տեր-Գրիգորյան Հովհաննես
 Օհանյան Սողոմոն

Անդեղակոթ
 Ալեկու
 Շաղաթ
 Ուզ
 Շաղաթ
 Շաղաթ
 Բռնակոթ
 Ալեկու
 Մազրա
 Ալեկու
 Մազրա
 Մազրա
 Մազրա
 Ուզ

Կ Ա Պ Ա Ն

Դավթյան Արա
 Մարտիրոսյան Արշակ
 Մելիք-Աղամիրյան Գրիգոր
 Օրբելյան Հովհաննես

Զեյվա
 Նորաշենիկ
 Նորաշենիկ
 Վաչագան

ՂԱՐԱՂՇԼԱՂԻ (ԲԵՐԴԱԶՈՐԻ)

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾՆԵՐ

Ավունց Հարուիթյուն
 Բալասանյան Սահակ
 Բողունց Աբրահամ
 Բողունց Սահակ
 Բողունց Ղարա
 Գևունց Աստվածատուր
 Գյուլունց Ներսես
 Դանիելյան Հակոբ
 Յախշունց Ղազար
 Քյոսունց Աբրահամ
 Կոսունց Սարուխան
 Շղբլանց Մարիա

Ոսկանյան Միրզա
 Զորանանց Առուստամ
 Զորանանց Ալեքսան
 Սարուխանյան Սահակ
 Սահակյան Դանիել
 Սահակյան Պետրոս
 Սահակյան Հարուիթյուն
 Սայունց Բախշի
 Տեր-Գաբրիելյան Ասլան
 Տեր-Թովմասյան Ալեքսան
 Քոանց Բաբա

ՄԻՆՔԵՆԴԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

ՏԱՐԻՔԸ

1.	Ալեքսանյան Շափաղաթ	35
2.	» Արմենակ՝ որդին	8
3.	» Արշակ՝ որդին	6
4.	» Ռուբեն՝ որդին	4
5.	» Բաջի՝ մայրը	60
6.	Աղամյան Գրիգոր	12
7.	» Խաչատուր՝ եղբայրը	8
8.	» Համբարձում՝ եղբայրը	6
9.	» Սառա՝ քույրը	4
10.	Աղաբեկյան Գալուստ	6
11.	Ասրյան Սիմոն	14
12.	» Խանում՝ քույրը	8
13.	Արզումանյան Թևոս	25
14.	Արզումանյան Բոխչի	35
15.	» Միքայել՝ որդին	7
16.	» Շախի՝ աղջիկը	2
17.	Բաղդասարյան Սահակ	52
18.	» Աննա՝ կինը	44
19.	» Մանուշակ՝ աղջիկը	14
20.	Բաղյան Մանուշակ	14
21.	Բարխուդարյան Սիմոն	28
22.	Բաղդասարյան Հերիքնազ	25
23.	Բաղալյան Առաքել	25
24.	Բալասանյան Սերգո	2
25.	Բարսեղյան Հայրապետ	70

26.	»	Հովակիմ՝ թոռը	7
27.	»	Սերգո՝ թոռը	5
28.	»	Ավետիս՝ թոռը	3
29.	Բեգլարյան	Գրիգոր	55
30.	»	Հերիքնազ՝ կինը	50
31.	»	Մեշի՝ աղջիկը	8
32.	»	Մանուշար՝ որդին	24
33.	»	Նանուս՝ սրա կինը	22
34.	»	Արշակ՝ տղան	1
35.	Բեգլարյան	Աղաջան	75
36.	»	Մինաս՝ որդին	48
37.	»	Թազա՝ սրա կինը	44
38.	»	Մարիամ՝ աղջիկը	8
39.	»	Հայկանուշ՝ աղջիկը	2
40.	»	Ղևոնդ՝ տղան	5
41.	»	Խոսրով՝ Աղաջանի երկրորդ տղան	40
42.	»	Սահրնազ՝ սրա կինը	35
43.	»	Նիկողայ՝ որդին	10
44.	»	Մաթևոս՝ որդին	8.
45.	Բեգարյան	Բաբա	72
46.	»	Խանուս՝ կինը	56
47.	»	Սիմոն՝ որդին	18
48.	»	Աեքսան՝ որդին	32
49.	»	Լուսիկ՝ սրա աղջիկը	5
50.	»	Լևոն՝ տղան	3
51.	»	Վարդան՝ տղան	1
52.	Բուդաղյան	Նիկողայ	50
53.	»	Գալուստ՝ տղան	8
54.	Գաբրիելյան	Քալանթար	90
55.	»	Մարիամ՝ կինը	80
56.	»	Միրզա՝ սրանց ավագ որդին	65
57.	»	Շամիր՝ սրա տղան	28
58.	»	Հակոբջան՝ Քալանթարի որդին	60
59.	»	Ղուսաշ՝ սրա կինը	55
60.	»	Մանուշակ՝ սրանց աղջիկը	8
61.	»	Սահրնազ՝ աղջիկը	6

62.	»	Մելիք՝ տղան	4
63.	»	Սողոմոն՝ տղան	2
64.	»	Հարություն՝ Քալանթարի տղան	45
65.	»	Համբարձում՝ սրա տղան	12
66.	»	Վարթի՝ աղջիկը	1
67.	»	Շախի՝ Քալանթարի թոռը	14
68.	Գևորգյան	Թագուհի	65
69.	Գևորգյան	Հասրաթ	60
70.	»	Գրիգոր՝ որդին	28
71.	»	Մարիամ՝ սրա կինը	25
72.	-	Աննա՝ սրանց աղջիկը	6
73.	»	Գևորգ՝ տղան	1
74.	»	Օհանջան՝ Հասրաթի մյուս որդին	26
75.	»	Անդրեաս՝ Հասրաթի երրորդ որդին	24
76.	»	Անդրանիկ՝ սրա տղան	1
77.	»	Սարգիսջան՝ Հասրաթի եղբայրը	54
78.	»	Մինաս՝ սրա տղան	24
79.	»	Կարապետ՝ տղան	8
80.	Գրիգորյան	Գալուստ	1
81.	Դավթյան	Սողոմոն	60
82.	Դավթյան	Դանիել	50
83.	»	Խաչի՝ տղան	20
84.	»	Սերգո՝ տղան	12
85.	Զիլֆիյան	Շափաղաթ	20
86.	»	Հայրապետ՝ եղբայրը	18
87.	Թունյան	Շամամ	80
88.	»	Բալասան՝ որդին	50
89.	»	Աբգար՝ որդին	48
90.	»	Գյուլնշան՝ սրա աղջիկը	6
91.	Թուլյան	Ալեքսան	65
92.	Կուլյան	Ներսես	3
93.	Հայրյան	Մանուշակ	65
94.	Հայրյան	Թամամ	40
95.	»	Անդրեաս՝ տղան	1
96.	Հայրապետյան	Սարգիսջան	45
97.	»	Տիգրան՝ տղան	14

98.	Հայրապետյան	Հովհաննէս	58
99.	»	» Ասլի	50
100.	»	Դավիթ՝ սրանց որդին	6
101.	»	Գևորգ՝ որդին	4
102.	»	Վարդանուշ	2
103.	»	Սողոմոն՝ Հովհաննէսի եղբայրը	54
104.	»	Գյուլի՝ սրա կինը	45
105.	»	Սեդրակ՝ սրանց տղան	16
106.	»	Մարուսյա՝ աղջիկը	8
107.	»	Հայրապետ՝ տղան	6
108.	»	Պողոս՝ տղան	2
109.	Ղահրամանյան	Համբարձում	55
110.	»	Թամամ՝ կինը	55
111.	»	Մարիամ՝ աղջիկը	10
112.	»	Շամամ՝ աղջիկը	8
113.	»	Գյուլ՝ աղջիկը	6
114.	Ղուկասյան	Մարիամ	45
115.	Մատիեյան	Ալում	45
116.	»	Սարնգյուլ՝ քույրը	40
117.	Մանուչարյան	Օլինկա	1
118.	Մեժլումյան	Թագուհի	80
119.	»	Վարդի՝ հարսը	52
120.	»	Նանում՝ սրա աղջիկը	8
121.	»	Սառա՝ Վարդիի թոռը	1
122.	Մինասյան	Նիկոլայ	13
123.	»	Շախի՝ քույրը	8
124.	»	Պողոս՝ եղբայրը	6
125.	Մկրտչյան	Շախի	30
126.	»	Գրիգոր՝ տղան	6
127.	Հարությունյան	Ավանես	75
128.	»	Հայրապետ՝ որդին	34
129.	»	Շարմաղան՝ սրա կինը	30
130.	»	Վարդանուշ՝ սրանց աղջիկը	8
131.	»	Վարդան՝ տղան	6
132.	»	Գալուստ՝ տղան	1
133.	Հակոբյան	Օսիկ	60

134.	Հակոբյան Գևորգ	70
135.	» Թագուհի՝ կինը	60
136.	» Զաքար՝ սրանց տղան	15
137.	» Բախշի՝ տղան	30
138.	» Համբարձում՝ սրա տղան	2
139.	» Նուբար՝ աղջիկը	4
140.	Հակոբյան Սարգիս	80
141.	» Սիմոն՝ որդին	36
142.	» Ամիր՝ որդին	40
143.	» Մանուշակ՝ սրա աղջիկը	8
144.	» Սառա՝ աղջիկը	6
145.	» Հերիքնազ՝ աղջիկը	4
146.	» Ասատուր՝ տղան	2
147.	Հարությունյան Գյուլի	24
148.	Հովակիմյան Սաթենիկ	11
149.	Հովհաննիսյան Գալուստ	14
150.	Հովսեփյան Մանաս	28
151.	Զավադյան Խասա	85
152.	Սարգսյան Ալեքսան	65
153.	» Թագա՝ կինը	60
154.	» Համբարձում՝ Ալեքսանի եղբայրը	60
155.	» Շուշանիկ՝ թոռը	1
156.	Սահակյան Սոֆիա	4
157.	» Սառա՝ քույրը	2
158.	Սարգսյան Անդրեաս	26
159.	Սարգսյան Սոֆիա	18
160.	Սաֆարյան Հովհաննես	25
161.	Սիմոնյան Գրիգոր	3
162.	Սիմոնյան Սեդրակ	22
163.	Վարդազարյան Զավահիր	70
164.	» Անուշ՝ թոռը	4
165.	» Շամիր	60
166.	» Մինա	60
167.	Տեր-Մինասյան Մինաս քահանա	80
168.	» Համբարձում՝ թոռը	22
169.	Օհանյան Հայրապետ	70

170.	»	Սաթենիկ՝ թոռը	8
171.	»	Ալեքսան՝ թոռը	6
172.		Օհանյան Դավիթ	75
173.	»	Աննա՝ կինը	65
174.	»	Հարություն՝ սրանց որդին	40
175.	»	Վարդի՝ սրա կինը	30
176.	»	Սառա՝ սրանց աղջիկը	6
177.	»	Նանուամ՝ աղջիկը	4
178.	»	Վարսենիկ՝ աղջիկը	2
179.	»	Գրիգոր՝ Դավթի երկրորդ որդին	32
180.	»	Նախշուն՝ սրա կինը	30
181.	»	Անդրեաս՝ սրանց տղան	4
182.	»	Մանուշակ՝ աղջիկը	12
183.	»	Գյուլնշան՝ աղջիկը	6
184.		Օհանջանյան Առաքել	68
185.	»	Նաբաթ՝ կինը	40
186.	»	Մանուշակ՝ սրանց հարսը	20
187.	»	Գաբրիել՝ սրանց թոռը	7
188.	»	Պետրոս՝ թոռը	5
189.	»	Հայկանուշ՝ թոռը	3
190.		Օհանյան Բաղդասար	85
191.	»	Օհան՝ որդին	58
192.	»	Վարսենիկ՝ աղջիկը	16
193.	»	Դանա՝ աղջիկը	16
194.	»	Ծատուր՝ տղան	14
195.	»	Հարություն՝ տղան	12
196.	»	Շախնանա՝ Օհանի հարսը	25
197.	»	Խանում՝ սրա աղջիկը	2

Ծանոթություն.— Մինքենդի 696 հայ բնակիչներից 456-ն են կարողացել փախչել և փրկվել կոտորածից: Այս 197 հոգին հայտնի սպանվածներն են, իսկ 43-ը կամ անհայտ կորել են կամ (որավելի հավանական է) թուրքերի կողմից առևանգվել են (հատկապես երիտասարդ կանայք և աղջիկները): Ինչպես գրում է հեղինակը (էջ 18) հայերը մի քանի օր հետո Շուշիի թուրքերից ազատել էին հինգ գերեվարված մինքենդցի հայերի:

Մինքենդյան ողբերգությունը, իրոք, հայերի ցեղասպանու-
թյան նախօրոք կազմակերպված ակնհայտ փաստ է, որովհետև
սպանված 197 հայերի մեծամասնությունը ծերեր ու երեխաներ
են, ըստ որում՝ 77-ը մինչև 10 տարեկան երեխաներ— (սմբ.):

Ընդհարումը Զանգեզուրի գավառում	5
Կոտորածը Մինքենդում	14
Ընդհարումներն ու ավերումները Խոզնավար, Խնածախ, Զեյվա և Հարար գյուղերում	20
Երկու Զեջիմլուների ավերումը	26
Ղարաղշլաղի ընդհարումները	28
Ընդհարումները Տաթևի շրջանում	32
Ընդհարումները Սիսիանում 1905 թ.	35
Կոտորածը Դարարասում	41
Ընդհարումները Սիսիանում 1906 թ.	46
Ընդհարումները Ղափանում	50
Խմբագրի կողմից	66